Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4085

28 JUN 2005
20 OCT 2009
83-3
Գ-66
1001/423

ԳԷՕԹԷ 1975

ՀԵՐՄԱՆ ԵՒ ԴՈՐՈԹԷԱ

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՊԵՏ.
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

Գերմաներէնից թարգմանեց

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
1904

20.03.2013

4085

Дозволено цензурою 16 Января 1904 г. г. Тифлисъ.

1975

ՆՈՒԷՐ ԻՒՐ ՄԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉ

ՊԱՐՈՆ ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԵԱՆՑԻՆ

Թարգմանչից

146

Ա. Ռ Ա. Ջ Ա. Բ Ա. Ն

Հերման եւ Դորոթէան իւր պարզութեան տակ թագցրած գաղափարի վսեմութեամբ եւ գեղեցկութեամբ զբաւում է բոլորին։ Մինչեւ այժմ լոյս են տեսել այդ գրքի հայերէն երկու արձակ թարգմանութիւններ. առաջինն՝ արեւմտեան բարբառով, Պէրպէրեանի թարգմանութեամբ, առանձին գրքոյկով, երկրորդն՝ արեւելեան բարբառով, Լեւոն Տիգրանեանի թարգմանութեամբ, որ լոյս է տեսել 1895 թ. Մարտ ամսագրի մէջ*։ Երկու թարգմանութիւններն ի նկատի առնելով, ես գերմաներէն բնագրից տաղաչափութեամբ (առանց յանգերի ինչպէս եւ բնագիրն է) թարգմանեցի այդ գրուածքը, միշտ աշխատելով հարազատ մնալ բնագրին։ Զափն արաբական կոչուած չորստոնեան, տասնեւհինգ վանկանի չափն է։ Այդպիսի մի բանաստեղծական երկի ոգու եւ տպաւորութեան համար չափի նշանակութիւնը շատ մեծ է։ Այս գրուածքի թարգմանութեան համար ինձ քաջալերել եւ գերմաներէն լեզուի խրթնութիւնների մէջ մեծ օգնութիւն է արել իմ ուսուցիչը, որի անուան եւ նուիրում եմ թարգմանութիւնս. եւ եթէ այժմ հակառակ նորա խորհրդի շտապում եմ ի լոյս ընծայելու, աւելի յոյս ունեմ ընթերցողների ներողամտութեան վրայ։ Ուշիմ քննադատն անշուշտ կիմանայ Գէօթէի գրուածքը եւ այն էլ չափականը թարգմանելու դժուարութիւնները։ Թէ իմ այս առաջին փորձը որքան յաջող է, մնում է ուրիշներին դատելու այդ մասին։

Գրուածքի ընթացքում մի քանի կարեւոր ծանօթութիւններ եմ աւելացրել, օգտուելով Մակս Փիշերի բացատրութիւններից, որ տպուել են Մանշտէյնի հրատարակած բնագրի մէջ։

Յարութիւն Պետրոսեան

1904 թ. 10 Յունուարի.
Ս. Էջմիածին.

---

* Այդ երկուսի մէջ նախերգանքի թարգմանութիւնը չկայ։

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Ոճիրը եղաւ, որ մի անգամ ոգևորեց Պրոպերցն[1] ինձ,
Որ ինձ սիրով ընկերացաւ և Մարցիալն[2] անվեհեր,
Որ դպրոցում ես չթողի հին դասական գրուածքներ՝
Իմ կեանքի մէջ ինձ անբաժան մինչ Լացիոն հետևող.
Որ ջանացի ես լաւ դիտել բնութիւնն ու գեղարուեստ,
Ոչ մի անուն ինձ չպատրեց, չփաշխանդեց մի դաւանանք,
Որ ես երբէք չփոխուեցայ կեանքի ծանր ճնշումից,
Կեղծաւորի անպօր դիմակն անդոսնեցի համարձակ:
Այս սխալներով, որ դու, Մուսա՛, այնպէս սիրով խնամեցիր,
Դաժան ամբոխն ինձ մեղադրում, իմ մէջ չար բան է տեսնում,
Նոյնիսկ բարի, ազնիւ մարդն էլ ինձ չար աչքով է նայում:
Բայց ինձ միայն կարող ես դու՛ հրամայել, ո՛վ Մուսա.
Պատանեկան իմ տարիներ դու ես միայն վերածնում,
Եւ այդ դու ինձ խոստանում ես մինչև վախճանն իմ կեանքի:
Սակայն այժմ կրկնապատկի՛ր քո խնամքը, Դիցանո՛յշ.
Ա՜խ, իմ գլուխն էլ չեն պատում գանգուրները փառահեղ.
Մարդ պրստակի կարիք ունի՝ իրեն, այլոց խաբելու.
Բայց կեսարն[3] էլ իւր գլուխը պէտքէ շքեղ պրստակէր:
Թէ ինձ համար դավինները ես դու պատրաստել, թող մընան,
Ուղէշները տան ճիւղի վերայ, որ շնորհես արժանուն:

---

1 Պրոպերցն Օգոստոս կայսեր ժամանակակից հռոմայեցի մի բանաստեղծ էր, որի երերերգութիւններին ոգով Դեօրքն գրել է իւր «Հռոմէական երերերգութիւնները»:

2 Դամիտիանոս կայսեր ժամանակակից հռոմայեցի բանաստեղծ. նորա գրուածքների նմանութեամբ Դեօրքն գրել է իւր «Բենիխան» եւ «Վենետիկեան էպիգրամմաները»:

3 Կեսարը դափնիներով գլուխը պսակում էր՝ իւր ճաղատութիւնը ծածկելու համար:

Ընտանեկան պատկի համար առատ վարդեր հիւսիր դու,
Շո՛ւտ, քան շուշանն է ոլորում իւր դանդուրներն արծաթի.
Թո՛ղ ամուսինն հրճահրուէ կրակը սուրբ օճախի,
Ու թո՛ղ որդին ժիր և աշխոյժ խռիւ դցէ հրճուանքով:
Բաժակը թող միշտ լիք լինի: Զրուցատէր ընկերնե՛ր,
Համախոհներ, համեցէ՛ք ներս, ահա պատկներ[1] ձեզ համար:
Նախ այն մարդու կենաց խմենք[2], որ անվեհեր ազատեց
Հոմերոսի անունից մեզ, լայն ասպարէզ բանալով:
Ո՞վ յանդգնեց կռուել դից հետ և ո՞վ նոյնիսկ մէկի հետ.
Բայց Հոմերեան լաւ է լինել, նոյնիսկ երբև վերջինը:
Ուստի այս նոր երգը լսէք. խմեցէ՛ք կրկին մի անգամ.
Թող ձեզ շահէ ուրախ գինին, իսկ սէրը՝ ձեր ականջներ:
Գերմանացոց բերեմ ձեզ մօտ՝ դէպի այդ տունն անվրդով,
Ուր որ մարդը ընութեան մօտիկ՝ մարդու նման է ամուր:
Թող գայ մեզ հետ երգչի[3] հոգին, որ շուտափոյթ պրոտակեց
Լուիզային սիրելու հետ, որ մեզ հրճուանք պատճառէ:
Ես կը յիշեմ ժամանակի տխուր, դժնեայ պատկերներ,
Բայց թող առողջ սերնդի մէջ յաղթող լինի արութիւն:
Թ՝արցունք բերեմ ձեր աչքերից և երգելով ներշնչեմ
Ուրախութիւն ձեր սրտերին, եկէք սրտանց ձեռք զարկենք:
Խոհեմ լինին մեր զրոյցներ, ու թող դարից վերջապէս
Իմաստութիւն մենք սովորենք. բախտը որքո՞ն չի փորձել:
Ուրախ աչքով դուք նայեցէք այն վշտերին դառնագէտ,
Երբ ձեր ուրախ, զուարթ հոգուն շատ աւելորդ կրթուայ:
Սովորեցինք ուրիշ մարդկանց և ազգերի ճանաչել.
Ուստի թողէ՛ք ուրախանանք՝ ճանաչելով մեր սրտեր:

---

[1] Հին յոյներն ու հռոմայեցիք խնջոյքի ժամանակ գլուխները զարդարում էին պսակներով:

[2] Բանաստեղծն առաջարկում է խմել Վոլֆի կենացը, որ իւր »Prolegomena ad Homerûm» գրուածքով ցոյց տուեց, թէ հոմերեան քերթուածները մի մարդու հեղինակութիւն լինել չեն կարող:

[3] Ակնարկում է Հայնրիխ Ֆոսսի «Լուիզայ» հովուերգութիւնը:

ՀԵՐՄԱՆ ԵՒ ԴՈՐՈԹԷԱ

Ա. ԿԱԼԼԻՈՊԷ[1]

Ճակատագիր եւ մասնակցութիւն.

«Երբէք շուկան և փողոցներն այսքան թափուր չեմ տեսել.
«Եւ մեր քաղաքն ինչպէս փոխուել, ինչ ամայի է դարձել.
«Կարծես էլ մեր բնակիչներից յիսուն հոգի չեն մնում:
«Հետաքրքիրն ինչ չի անում. վազում է արդ շտապով՝
«Փախստական թշուառների տարաբախտ չուն տեսնելու:
«Մի ժամուայ չափ ճանապարհ կայ մինչ խճուղին հասնելու.
«Բոլորն այնտեղ են ոլանում կէսօրուայ տաք փոշու մէջ:
«Զէլ ցանկալ տեղից շարժուել՝ դժբախտ վիճակ տեսնելու
«Փախստական բարի մարդկանց, որ ազատած գոյքերով՝
«Անդրհռենեան սիրուն երկրից բաժանուելով վշտալի,
«Ահա դէպի մեզ են գալիս և մոլորուած թափառում
«Մեր պտղաւէտ հովտի խորշում՝ ոլորպտոյտ շաւիղով:
«Լա՛ւ ես արել ուրեմն, ո՞վ կին, որ քո որդուն լիաուատ՝
«Տալով խմիչք, պաշար, ձորձեր, ուղարկել ես նոցա մօտ՝
«Թշուառներին բաժանելու. հարուստ մարդը պէտք է տայ:
«Ի՞նչպէս սուրում է պատանին, սանձահարում ձիերը.
«Շատ սիրուն է մեր նոր կառքը. այնտեղ ազատ չորս հոգի
«Հանգիստ կերպով տեղ կունենան, կառապանն էլ առջևում:
«Այժմ մենակ է քշում նա. ինչպէս թեքեց անկեան մօտ:

---

[1] Ճարտասանութեան եւ բանաստեղծութեան մուսան, յունական իններ մուսաներից մէկը: Գէօթէն իւր գրուածքի իններ գլուխներից իւրաքանչիւրը նուիրում է այդ մուսաներից մէկին:

Ոսկէ-Առլուծ հիւրանոցի տէրն իւր կնոջ հետ նստած
Հանդիստ կերպով՝ շուկայի մօտ, այս էր խօսում դրան առաջ։
Խելօք, հմուտ տանտիկինը այսպէս տուաւ պատասխան.
«Երբէք, ա՛յ մարդ, մաշուած շորեր չեմ ընծայում ես սիրով,
«Որովհետև շատ պէտք են մեզ, նոյնիսկ փողով չեն ճարւում,
«Երբ որ յանկարծ պէտք են դալի. սակայն այսօր ես տուի
ծածկոցների, շալակների ընտիր-ընտիր տեսակներ,
«Լսելով, որ մերկ են գնում աղաներ ու ծերունիք։
«Բայց ինձ ասդեօք դու կըներէ՞ս, կողոպտեցի պահարանդ,
«Ու մանաւանդ քո խալաթը՝ ծաղիկներով հնդկական,
«Նուրբ բամբակի թելից հիւսած, աղնիւ բրդէ աստառով,
«Այդ էլ տուի. բարակ էր, հին, վաղուց ընկած մօդայից։
Երբ այս լսեց, բարի տանտէրն ասաց նորան՝ ժպտալով.
«Ես չեմ կարող այդ բամբակեայ, բուն հնդկական կրտորից
«Հին խալաթն էլ չափոսոսալ. մենք նմանն էլ չենք դտնի։
«Ճիշտ է, արդէն չէի հագնում։ Անշուշտ, սիրում են մարդիկ
«Մեր օրերում սերթուկ, բաճկոն, կօշիկ հագնել տանից դուրս,
«Իսկ հողաթափ կամ թէ գդակ էլ բանի տեղ չեն դնում։
«Տե՛ս, տանտիկինն ասաց նորան, ահա դալիս են ոմանք
«Զուն տեսնելու դնացողներից. արդ չուն անցած կլինի։
«Ոտնամաններն ինչ փոշոտուած, դէմքերն ինչպէս արևէդ.
«Տե՛ս, ամեն մարդ թաշկինակով իրեն քրտինքն է սրբում.
«Այս տօթ ժամին այդքան հեռու չէի դնայ, որ յուղուեմ
«Այդպիսի մի տեսարանով. դոն կրմնամ պատմածով։
Այնուհետև բարեսիրտ հայրն ասաց նորան՝ շեշտելով.
«Չէինք տեսել այսպիսի հունձ, այսպիսի լաւ եղանակ.
«Մենք ցորենն էլ ներս կրտանենք, խոտը արդէն չորացաւ
«Ու տուն բերինք։ Ջինջ է երկինք. չի երևում ոչ մի ամպ.
«Արևելքից փչում է հովն իւր հաճելի զովութեամբ։
«Այս տեսակն եղանակ է. ցորենն հասել է վաղուց.
«Առաւօտեան մեր լեռատ դաշտերն հնձել կրսկրսենք։
Մինչդեռ այսպէս խօսում էր նա, մարդկանց, կանանց խմբերը,
Որ շուկայով դառնում էին, հեռդհեռէ մեծացան։

Իւր դստերերի հետ միասին յետ էր դալիս շտապով՝
Հրապարակի միւս ծայրից կալուածատէր դրացին,
Առաջնակարգ վաճառական, դէպի իւր տուն նորոդուած,
Մի լայն, արձակ կառքում նստած, որ Լանդայում էր շինուել։
Կեանքը եռայ փողոցներում, զի բազմամարդ էր քաղաքն՝
Արհեստներով ու զանազան դործատներով հռչակուած։
Երջանիկ զոյգն այդպէս ահա նստած հանդիստ դրան մօտ,
Հրճւում էր միշտ, անցորդներին շատ նշաններ անելով։
Լուրջ, ծանրախոհ տիկինն սկսեց այսպէս խօսել և ասաց.
«Դալիս է, տե՛ս, մեր քահանան, դեղագործն էլ նորա հետ.
«Թող մեզ պատմեն նորա բոլորն, ինչ որ տեսել են դաշտում,
«Ինչ որ մարդկանց ուրախութիւն չի պատճառում տեսնելիս։
Հեղ, սիրալիր նորա եկան, բարևեցին երկուսին,
Դարպասի մօտ, նստարանի վրայ նստան միմեանց մօտ,
Լաւ թափ տուին փոշոտ ոտքերն ու դէմքերին հով արին.
Եւ փոխադարձ ողջոյնից յետ համարեա թէ դժկամակ
Սկսեց խօսել նախ դեղագործն ու այս ուղղեց ամենքին.
«Ահա մարդիկ այսպէս են ճիշտ և մէկմէկուց պակաս չեն.
«Հրճւում են միշտ՝ մերձաւորին վրանդի մէջ տեսնելով.
«Վազում են շուտ դէպի հրդեհն աւերածու, վերասլաց,
«Գնում տեսնելու մահապարտին, որ տանում են դէպի մահ։
«Բոլոր մարդիկ երնում են դուրս՝ տեսնեն բարի, խեղճ մարդկանց
«Վիճակն անբախտ. չեն մտածում, թէ նոյնպիսի մի փորձանք
«Գուցէ շատ հեշտ իրենց գլխին յանկարծ կրդայ վաղ թէ ուշ.
«Աննեերելի թեթևութիւն, բայց այդ միշտ կայ մարդուս մէջ։
Լուրջ, մտախոհ սկսեց խօսել աղնիւ խելօք քահանան,
Նա, որ զարդն էր այդ քաղաքի, մի առնադէմ տղամարդ.
Սա լաւ դիտէր, թէ ինչ է կեանքն ու կարիքներն համայնքի,
Եւ մանաւանդ նա մեծ արժէքն էր հասկացել սուրբ դրքի,
Որ պարդում է մարդկային բախտ և մարդկային մտածմունք.
Լաւ էր ծանօթ և աշխարհիկ ընտրելագոյն դրքերին.
Եւ սա ասաց. «Երբէք էլ չեմ դատապարտի ես մի բան,
«Որ տուել է մայր բնութիւնն իւր անվնաս մի հակում.
«Ինչ որ միտքն ու դատողութիւնն անկարող են կատարել,

«Գործում է մի յարմար ընազդ՝ մարդուս մղող անարգել։
«Հետաքրքիր անյայտ ոգին մեծ հրապոյրով թէ մարդկանց
«Զբաղուէր, ասա՛, արդեօք, կիմանար մարդ, թէ ինչպէս
«Բնութիւն և կեանք շաղկապուած են. քանզի մարդու նախ
նոր բանն,
«Յետոյ միայն անդուլ ջանքով օգտակարն է որոնում,
«Վերջը՝ բարին, որ արժէք է տալիս նորան, հանում վեր.
«Պատանեկան հառակի մէջ անհոգութիւնն է ընկեր,
«Որ ծածկում է ամեն փորձանք, բարեյաջող և արագ
«Հետքն է ջնջում ծանր վշտի, երբ նոր է դեռ անցել այն։
«Գովքի, երօք, արժան է նա, որին հասուն տարիքում
«Այդպիսի մի զուրաթ հոգուց մի լուրջ միտք է զարդանում,
«Որ գործում է երջանկութեան կամ վշտի մէջ ժիր, աշխոյժ.
«Չի նա բարիք է միշտ տալիս, ամեն վնաս դարմանում։
Հեղ, սիրալիր վրայ բերաւ տանտիկինը՝ անհամբեր.
«Պատմեցէ՛ք մեզ, ինչ որ տեսաք, ուզում եմ ես իմանալ»։
Դեղագործը առաց շեշտով. «Նատ դժուար է, չեմ կարող
«Այսպէս շուտով ուրախանալ, երբ ես տեսայ ամեն բան։
«Ո՞վ է կարող, արդեօք, պատմել այն աղէտներն այլևայլ.
«Արդէն հեռուից տեսանք փոշին, դեռ դաշտն իմար մենք
չիջած.
«Փախստական խեղճերի չուն ելրէ ելուր էր շրջում՝
«Մի աննշմար տարածութեամբ. քիչ բան էր մարդ նկատում։
«Բայց երբ հասանք շաւիղը նեղ, որ հովիտով է անցնում,
«Գաղթողների և կառքերի ժխորն անչափ մեծացաւ։
«Նատ անբախտներ դեռ ևս տեսանք՝ մեր առաջից անցնելիս,
«Եւ իմացանք՝ որքան դառն է այդ փախուստը դժնդակ,
«Եւ հապճեպով փրկած կեանքի զգացմունքն ինչ բերկրալի։
«Ցաւալի էր աչքով տեսնել նոցա դոյքերն այլևայլ,
«Որ քիչ առաջ պահում էին մի բարեկազմ, շէն տան մէջ,
«Ուր որ տանտէրն իւր չորս բոլոր յարմար կերպով էր դասել,
«Ընդմիշտ պատրաստ գործածելու, պէտք է այնտեղ ամեն բան.
«Եւ այդ բոլորն այժմ տեսնել ոսյլակներում, կառքերում
«Խառնափնթոր, անկարգ դասած ու հապճեպով աղատած.

«Դարակի վրայ մաղն էր դրած ու ծածկոցը բրդեղէն,
«Իսկ տաշտի մէջ տեղաշորեր, հայելու վրայ սաւանը։
«Ցիշում եմ, ա՛խ, մեր քաղաքում քսան տարի դեռ առաջ
«Հրդեհ եղաւ, տեսանք ինչպէս կորցնում է մարդ խելք ու միտք,
«Փրկում անպէտք, չնչին բաներ ու դէն ձգում պիտանին։
«Այդպէս անմիտ հոգածութեամբ ծանր բարձած եզ ու ձի
«Կրում էին չնչին իրեր՝ հին և անպէտք տախտակներ
«Եւ տակառներ ու սագանոց, նոյնիսկ վանդակն հաւերի։
«Հևում էին կին ու մանուկ՝ կապոցներով բեռնուած,
«Առաջ անցնում, անպէտք բանով լի դամբիւղներ շալակած.
«Մարդ իւր յետին ստացուածքից ինչ դժուար է բաժանւում։
«Հոծ ամբոխը շարժում էր միշտ դէպի առաջ, փոշու մէջ,
«Անկարգ կերպով, խառնիխուռն։ Մէկը իւր խեղճ կենդանուն
«Քշում էր մեղմ ու հանդարտիկ, իսկ մի ուրիշն՝ շտապով։
«Ցանկարծ լսուեց ճմլած կանանց, մանուկների աղաղակ
«Եւ անատոց սուր բառաչիւն, շների հաչոց մէջ ընդ մէջ,
«Դառն հառաչանք հիւանդների ու ծերերի, որ մահճում՝
«Ծանրաբեռնած կառքի վերայ նստել էին, օրօրւում։
«Ցանկարծ ճամբի եզերքի մօտ ակը շաղուից ելաւ դուրս,
«Ճռընչալով ցած գլորուեց ու կառքն ընկաւ փոսի մէջ.
«Զարհուրելի ճիչով մարդիկ շարտուեցան ցնցումից
«Կանաչազարդ դաշտի վերայ, բայց մընացին անվնաս.
«Ցետոյ ընկան և արկղներն ու թափուեցան սայլի մօտ.
«Նոցա ընկնելն ով որ տեսաւ, սպասում էր, թէ մարդիկ
«Արկղների ծանրութիւնից ջարդ ու փշուր կըլինին։
«Եւ կուռքն այդպէս մընաց ջարդուած, իսկ թշուառներն՝
անտէրունչ,
«Որովհետև ուրիշ մարդիկ եկան, անցան շտապով,
«Հոգ տանելով իրենց մասին և մղուելով հոսանքից։
«Շտապեցինք, գտանք այնտեղ հիւանդներին, ծերերին,
«Որ անկողնում, տան մէջ ցաւին հաղիւ էին դիմանում,
«Այժմ այստեղ գետնի վերայ հեծում էին վիրաւոր,
«Տոչորուելով արեգակից ու խեղդուելով խիտ փոշուց։
Նրան մարդասէր տանուտէրը այսպէս ասաց՝ զգացուած.

«Երնեկ Հերմանն հասնի նոցա և պաշար տայ, հագցնի.
«Ես հաճոյքով չէի տեսնի. Թշուառութեան տեսարանն
«Ցուզում է ինձ. զգացուելով այդ ազէտի լուրերով,
«Իսկոյն այնտեղ ուղարկեցինք մեր լեութեան մի լուման,
«Որ գէթ ոմանք այժ ստանան ու մեր սրտերն սիրուեն:
«Բայց մի թողնէք, որ նորոգենք այս պատկերները դժնդակ,
«Որովհետև սրտերի մէջ երկիւղ և հոգս են ծնում,
«Որ չարիքից շատ աւելի տեսլի են ինձ համար:
«Եկէք մնանենք այնտեղ, դահլիճն, ուր օդն է միշտ զովաշունչ,
«Արևն ուր չէ լուսաւորում, հատ՝ ամրապինդ պատերից
«Զերմ օդ նրա մէջ չի թափանցում. մէկ-մէկ բաժակ հին գինի
«Մեզ կբերէ մայրիկն այնտեղ, որ մեր վշտերն ամոքենք.
«Հաճելի չէ այստեղ խմել. օդում ճանճեր են վխտում:
Այդպէս նորա ներս գընացին, ուրախացան, զովացան:
Մեծ խընամքով մայրը նոցա գինի բերաւ՝ պարզ, ընտիր,
Ողորկ շշով՝ դրած փայլուն սկուտղի մէջ անագեայ,
Հետն էլ կանաչ, հրեշտակաձև գինուն յատուկ բաժակներ.
Նոքա մէկտեղ մի բոլորակ սեղանի շուրջ նստեցան,
Որ թանձր, պինդ ոտքեր ունէր, թուխ էր, փայլուն ու մոմած:
Տանտիրոջ և քահանայի բաժակները չրխկացին,
Սակայն երրորդն իրեն ձեռքինն անշարժ պահեց՝ մտախոհ:
Տանուտէրը նորան դիմեց այս խօսքերով սիրալիր.
«Դէհ, բարեկամ, ոչինչ, խրմենք, Աստուած պահեց փորձանքից,
«Պահում է դեռ և կը պահէ նոյնպէս գալիք օրերում:
«Արդեօք մեզնից ո՞վ չիմանում, թէ հրդեհից յետոյ միշտ,
«Որով նա մեզ սաստիկ պատժեց, ի՞նչ բարութեամբ ուխտեց
«Եւ խընամեց թշուառներին, ինչպէս որ մարդ իւր աչքի
«Բիբն է պահում, մարմնի բոլոր անդամներից սիրելի:
«Զպէտք է նա մեզ պահպանէ ապագայում և օգնէ:
«Մարդս միայն վտանգի մէջ գիտէ չափել իւր ոյժերը:
«Եւ նա, արդեօք, այս քաղաքը, որ տեղացող ջանքերով
«Մոխրի մէջից վերականգնեց, սուրբ օրհնութեամբ լցնելով,
«Պէտք է կրկին աւերը դարձնէ և զո՞ւր անցնի ամեն ջանք:
Զուարթադէմ և սիրալիր խօսեց ընտիր քահանան.

«Դուք ձեր հաւատն ամուր պահէք, ձեր համոզման պինդ կացէք,
«Որ միշտ մարդուն յաջողման մէջ խելօք ու քաջ է դարձնում,
«Փորձանքի մէջ մխիթարանք ու դերագոյն յոյս տալիս:
Նորան տանտէրն այսպէս ասաց՝ լուրջ, առնական մըտքերով.
«Ի՞նչ հիացմամբ Հրեշտակի ալիքն էլ ողջունում,
«Երբ դառնալով իմ գործերից՝ ափին էլ մտնենում.
«Նա վեհ էր միշտ ինձ երևում, բարձրացնում իմ հոգին:
«Բայց նոյն իսկ իմ մըտքով չանցաւ, թէ ափերը գեղանի՝
«Ֆրանսիացոց յարձակմանց դէմ պէտք պատնէշ լինին մեզ,
«Եւ լայնատիւռ նորա տաշտերն՝ անցքը փակող խրամատ:
«Տեսէք, ընութիւնն, արիասիրտ գերմանացիք և Աստուած
«Այսպէս են մեզ ահա պահում. ո՞վ կընկրճուի թուլութեամբ:
«Կռուող մարդիկ յոգնած են արդ. խաղաղութիւն է իշխում.
«Երբ բաղձալի օրը տօնենք եկեղեցում գումարուած,
«Երբ զանգերը ձայնակցեն երգեհոնի նուագին,
«Երբ ծնծղաներն հնչեցնեն «զՔեզ Աստուած[1]» մեղեդին,
«Այն ժամանակ, պատուելի՛ հայր, երանի՛ թէ իմ Հերման
«Սիրելու հետ անքակ ուխտով մօտենայ սուրբ սեղանին:
«Թող աշխարհիս ամեն կողմում ուրախ տօնուի այդ օրը
«Եւ լինի լինի ընտանեկան ուրախութեան տարեդարձ:
«Բայց իմ սիրտը սխրում է միշտ այդ պատանուն տեսնելիս,
«Որը տան մէջ աշխոյժ է, ժիր, դուրսը՝ երկչոտ ու դանդաղ:
«Քիչ է սիրում քէֆ ու խնջոյք և մարդկանց մէջ երևալ,
«Այ՛, նոյն իսկ օրիորդներից խոյս է տալիս շարունակ,
«Եւ պարերից, որ ամեն մի երիտասարդ է սիրում:
Այսպէս ասաց, ականջ դրաւ. յանկարծ լսուեց ձիերի
Հեռուից հասնող ուժգին դոփիւն ու դղրդոց մի կառքի,
Որ դարպասից արագութեամբ գլորւում էր դէպի բակ:

---

[1] «Te Deum landamus» զՔեզ Աստուած փառաւորեմք:

Բ. ՏԵՐՊՍԻԽՈՐԻ[1]

Հերման.

Երբ ամբակազմ որդին մտաւ սենեակի մէջ՝ այդ ժամին,
Մի թափանցող սուր հայեացքով նորան նայեց քահանան,
Ուշիմ զննեց նորա հասակն ու շարժուածքը միառմի՝
Զննող մարդու սուր աչքերով, որ մարդու դէմքն է կարդում.
Յետոյ ժպտաց, հարցրեց նորան մտերմական խօսքերով.
«Շատ փոխուած էք Դուք տուն գալիս, կարծես այդ Դուք չլինիք.
«Ձեզ չեմ տեսել այդքան ուրախ ու Ձեր հայեացքն՝ աշխոյժ, վառ.
«Գալիս էք Դուք ուրախ, դուարթ. գուցէ այսօր խեղճերին
«Նուէր տալով, Դուք նոցանից օրհնութիւն էք ստացել:
Որդին հանգիստ պատասխանեց այս լրջամիտ խօսքերով.
«Թէ լաւ արի՝ ես չգիտեմ. սակայն իմ սիրտն ինձ դրդեց
«Կատարել այն, որ պէտքէ ես արդ միառմի ձեզ պատմեմ:
«Մայր, հին շորեր տալու համար այս կողմ, այն կողմ շատ-ընկաք՝
«Որոնելու և ընտրելու. կապոցը շատ ուշացաւ,
«Ապա գինին, գարեջուրը զետեղուեցան մեծ ջանքով:
«Երբ դարպասից ես դուրս ելայ, փողոցով դաշտ սլացայ,
«Յետ էր գալիս քաղաքացոց, կանանց, տղայոց բազմութիւն.
«Գաղթողների մեծ կարաւանն արդէն հեռու էր անցել:
«Բայց նոցա կողմ ես սլացայ և քշեցի դէպի գիւղ,
«Ուր պէտքէ որ գիշերէին իմ լսածի համաձայն:
«Երբ իմ ճամբով առաջ անցայ, նոր խճուղուն ես հասայ.
«Այդ միջոցին մի սայլ տեսայ՝ շինուած ընտիր փայտերից.
«Օտար երկրի հուժկու եղներ քաշում էին սայլն առաջ.
«Իսկ մօտիկից մեծ քայլերով մի աղջիկ էր հետևում,

---

1 Պարի եւ պարերգութեան մուսան. ձեռքին բռնած եօթնաղի ֆնար:

«Որ վարում էր երկար փայտով այն եղները վիթխարի,
«Խելօքութեամբ առաջ քշում կամ յետ պահում՝ զսպելով:
«Երբ որ աղջիկն ինձ նկատեց, հանդարտ կառքիս մօտեցաւ
«Եւ ասաց ինձ. միշտ չենք եղել այսպէս թշուառ դրութեան մէջ,
«Ինչպէս այսօր տեսնում էք մեզ ուղու վերայ, անտէրունչ:
«Ես սովոր չեմ անծանօթից ողորմութիւն խնդրելու,
«Որ տալիս է տհաճութեամբ՝ թշուառներից պրծնելու:
«Բայց կարի՛ն ինձ դրդեց խօսել. յարգի վերայ, հէնց այստեղ
«Տարածուել է հարուստ մարդու նոր ծննդկան մի տիկին,
«Որին հաղիւ կարողացայ այս եղներով ազատել:
«Շատ դանդաղ ենք անցնում առաջ, դժուար է նա շունչ քաշում,
«Ու նորածին մերկ երեխան պահել է նա իւր գրկում:
«Եւ շատ քչով միայն մերոնք կարող են մեզ նպաստել,
«Թէ պատահենք մօտիկ գիւղում, ուր միաք ունենք հանգչելու.
«Բայց այս էլ կայ, վախենում եմ, որ նրանք այնտեղ չլինին.
«Իսկ թէ ունէք աւելորդ շոր և հարևան երկրից էք,
«Ողորմութեամբ նուիրեցէ՛ք անօգնական թշուառին:
«Այսքանն ասաց. և դունաթափ ծննդկանը բարձրացաւ
«Ու մի հայեացք ուղղեց վերան. իսկ ես նոցա ասացի.
«Ճշմարի՛տ որ բարի մարդկանց ներշնչում է մի ոգի,
«Որով նոքա զգում են միշտ կարիքները խղճուկի:
«Այսպէս մայրս նախազգալով ձեր վիճակը տարաբախտ,
«Ուղարկել է այս կապոցը, որ շնորհեմ մերկերին:
«Կապոցն խոկոյն ես քանդեցի, նոցա տուի վերարկուն,
«Որ մինչ այսօր հայրն էր հագնում, նոյնպէս շապիկ ու սաւան:
«Նա գոհացաւ ուրախութեամբ և ինձ ասաց սրտագին.
«Երջանիկը չի՛ հաւատում հրաշքների գոյութեան.
«Դժբախտութեան մէջ է միայն Տիրոջ մատը նա տեսնում,
«Որ մղում է դէպի բարին: Նա՛ թող տայ Ձեզ հատուցում:
«Եւ ես տեսայ ծննդկանին, որ ոսկեայ զգեստներն
«Ու մանաւանդ վերարկուի փափուկ բուրդն էր շոշափում:
«Դէ՛հ, շտապե՛նք, աղջիկն ասաց, որ մենք այն գիւղն հասնենք շուտ,
«Ուր պէտքէ որ մեր ընկերներն հանգիստ առնեն, գիշերեն.

«Եւ ես այնտեղ կը պատրաստեմ մանկան համար խանձարուրը։
«Ու նա կրկին ողջունեց ինձ՝ շնորհակալ լինելով,
«Բշեց եղներն՝ անցաւ առաջ, իսկ սանձերն ես քաշելով
«Չէի ուզում տեղից շարժուել. երկմտութեան մէջ էի.
«Արագավազ նժոյգներով, արդեօք, դնայի դէպի գիւղ՝
«Պաշարեղէնն ուրիշներին բաժանելու ցանկութեամբ,
«Թէ այդ բոլորն աղջկան տայի, որ բաժանէր հմտութեամբ։
«Եւ վճռեցի ես իմ սրտում ու ուղղայ դէպի նա.
«Շուտով կրկին հասայ նորան և ասացի շտապով.
«Բարի՛ օրիորդ, մայրս միայն ինձ զգեստներ չի տուել,
«Որ ես անտուն, խեղճ մերկերին կարողանամ հագցնել.
«Տուել է նա նոյնպէս պաշար և դանաղան խմիչքներ.
«Ահա կառքիս պահարանում բաւականին ես ունիմ.
«Եւ վճռեցի, որ անպատճառ այս նուէրներն էլ յանձնեմ Ձեզ,
«Որ ես իմ պարտքն աւելի լաւ կարողանամ կատարել.
«Դու շատ խելօք կը բաժանես, պատահմունքին չես նայի։
«Աղջիկն այսպէս պատասխանեց. Ես անաչառ կը լինիմ՝
«Ձեր նուէրը բաժանելիս, և աղքատը կը հրճուի։
«Ասպէս ասաց. պահարանի բերանն իսկոյն բանալով,
«Ես հանեցի առատ ապուխտ, հաց ու գինի, դարեջուր,
«Եւ այդ բոլորն այն աղջկան մէկիկ-մէկիկ յանձնեցի.
«Է՛լ կը տայի ուրախութեամբ, բայց ամանը դատարկուեց.
«Նա բոլորը ծննդկանի ոտքերի մօտ դեռեղեց,
«Անցաւ հեռու։ Իմ ձիերով դէպի քաղաք ես դարձայ։

Երբ Հերմանը վերջացրեց, դրուցասէր դրացին
Սկսեց խօսել.« Ո՜հ, երանի հաղար անգամ այն մարդուն,
«Որ այս դառն ժամանակին տանն է ապրում միայնակ,
«Որին երբէք կին ու մանուկ չեն փաթաթուում դողալով։
«Բախտաւոր եմ համարում ինձ. ո՛չ մի քանով ես այսօր
«Չէի ցանկալ ինձ հայր կանչեն՝ կնոջ, որդոց հոգսով լի։
«Նոյնիսկ յաճախ միտք եմ արել վախի մասին ինձ ու ինձ,
«Հաւաքելով իմ լաւ իրերն, ինչպէս հին-հին դրամներ
«Եւ հանդուցեալ մօրս դարդեր, որ մինչ այսօր չեն ծախուել։
«Իսկ շատ բաներ պիտ թողնէի, որ հեշտութեամբ չենք գտնում.

«Նոյնպէս խոտեր և արմտիք՝ մեծ ջանքերով հաւաքուած,
«Ափսոս էի ես համարում, թէև գնով մի բան չեն։
«Իմ օգնականն եթէ մնար, սիրտս հանգիստ կը լինէր։
«Թէ յաջողուի կանխիկ փողերս ու իմ անձն ազատել,
«Բոլորն արդէն վերկուած կլինի. թեթեւանա՛ մենակ մարդն։
«Ո՛վ դրացի, վրայ բերեց երիտասարդ Հերմանը.
«Ձե՛մ մտածում երբէք Ձեզ պէս, պարսաւում եմ Ձեր խօսքերն։
«Արժանի է նա, արդեօք, պատուի, որ շաբաթնակ օր-գիշեր
«Հոգս է տանում երջանկութեան կամ վշտի մէջ՝ իւր մասին,
«Չի բաժանում վիշտ ու հրճուանը, և որ թմրած սիրտ ունի։
«Աւելի, քան երբևիցէ, այսօ՛ր կուզեմ պատկուել,
«Երբ կարօտ են շատ աղջիկներ խնամակալ ամուսնու,
«Տղամարդը՝ դուարթ կնոջ, երբ փորձանք է սպառնում։

Հայրն այս ասաց՝ ծիծաղելով. «Ա՜յ, ինչ կասեմ այժմ քեզ.
«Այդպիսի մի իմաստուն խօսք քիչ ես ասել քո կեանքում։
Իսկ բարի մայրն աշխուժութեամբ այս խօսքերով մէջ մտաւ.
«Իրա՛ւ, որդեակ, ճիշտ ասացիր, մենք ենք տուել օրինակ,
«Որովհետև ուրախ օրում չենք ընտրել մենք միմեանց,
«Այլ մի տխուր և դառն ժամ մեր սրտերը միացրեց.
«Եւ այդ օրն էր երկուշաբթի. նախորդ օրը պատահեց
«Այն ահռելի, մեծ հրդեհը, որ մեր քաղաքն աւերեց։
«Անցել էր արդ քսան տարի. օրն էր նոյնպէս կիւրակի,
«Տօթ ու չոր էր եղանակը և սակաւ էր ջուրն այստեղ.
«Բոլոր մարդիկ ճեմում էին հանդիսական զգեստով՝
«Գիւղերի մէջ, պանդոկներում, ջրաղացներում՝ ցիր ու ցան։
«Հրդեհն անցաւ ողջ քաղաքով, փողոցներով սլացաւ՝
«Բռընկուելով մի բռանաշունչ, զօրեղ քամու հոսանքից։
«Կրակ դարձան մեր մառաններ՝ առատ դիզուած ցորենով,
«Փողոցները՝ մինչև շուկան, հօրս տունն էլ վառուեցաւ
«Այդ շաբթի մէջ, և այս տունն էլ մոխիր դարձաւ նորա հետ։
«Մենք շատ քիչ բան ազատեցինք. ես դաշտի մէջ այդ գիշեր
«Քաղաքից դուրս՝ անկողիններ, արկղերն էի պահպանում։
«Բայց վերջապէս քունն ինձ յաղթեց. իսկ երբ կրկին արթնացայ՝
«Արևից վաղ երկիր ինջող առաւօտեան զովութեամբ,

«Տեսայ սև ծուխ, վառ-վառ կրակ, դատարկ պատեր, ծխնելոյզ.
«Սիրտս սառուկ խոցուեց վշտից. բայց արևը դուրս եկաւ
«Է՛լ աւելի շքեղ տեսքով ու նորոգեց իմ հոգին:
«Ես շտապով ոտքի եկայ: Ուզում էի լմանալ
«Արդեօք, այնտեղ, ուր մեր տունն էր, ողջ մնացին մեր հաւերը.
«Ես շատ էի սիրում նոցա, մանուկ էր դեռ իմ հոգին:
«Երբ տան, բակի բեկորների վրայ եկայ շրջելու,
«Որ դեռ ևս ծխում էին, տեսայ մեր տունն աւերուած.
«Դու միւս ծայրից գալիս էիր, չորս բոլորդ զննելով.
«Անտառի մէջ թաղուել էի ձիդ և հրավառ դերաններ
«Ու փրլուանքներ թափուել էին. հեռքը չկար կենդանու:
«Կանգնել էինք մենք դէմ ու դէմ՝ տխուր, տրտում, մտախոհ,
«Որովհետև պատն ընկել էր՝ մեր բակերը բաժանող:
«Եւ բռնեցիր այնուհետև դու իմ աջ ձեռքն, ասելով.
«Եղիսաբէ՛թ, ինչպէս եկար, գնա՛, կայրես ոտներդ.
«Սաստիկ տաք է մոխիրն այստեղ, կոշիկներդ կայրուեն:
«Եւ պահելով ինձ քո գրկում՝ բակիդ միջով տարար դուրս.
«Այն ժամանակ կանգուն էր դեռ տան դռնակը՝ կամարով,
«Ինչպէս այժմ, և բոլորից այդ էր միայն մնացել.
«Ցաւ գրիր ինձ, համբուրեցիր, իսկ ես չէի թողնում քեզ:
«Բայց յետոյ դու այս խորհրդաւոր և լուրջ խօսքերն ասացիր.
«Մեր տունը, տե՛ս, աւերը դարձաւ, կա՛ց այստեղ՝ ինձ օգնելու.
«Քո հայրիկին իւր գործի մէջ ես էլ կօգնեմ փոխադարձ:
«Հոգատարս, մինչև քո մօրն ուղարկեցիր իմ հօր մօտ
«Եւ հաստատուեց մեր երջանիկ ամուսնութեան ուխտը սուրբ:
«Մինչև այժմ էլ յիշում եմ ես դերանները կիսավառ
«Եւ թէ ինչպէս արեգակը դուրս էր գալիս բոցավառ:
«Այդ օրն առայ իմ ամուսնուն, և ահռելի կործանման
«Հէնց ակզբի ժամանակը իմ դաւակին պարգևեց:
«Ուստի, Հերման, գովում եմ քեզ, որ մի ամբիծ, վառ յուսով
«Մտադիր ես աղջիկ ընտրել այս տխրալից օրերում՝
«Աւերմունքի, կռուի ժամին ամուսնութեամբ կապուելու:
Հայրը նորան ժիր և աշխոյժ պատասխանեց և ասաց.
«Նպատակդ գովելի է, իսկ պատմածդ՝ ճշմարիտ.

«Այո՛, ճիշտ որ ասածիդ պէս եկան, անցան մեր գլխով:
«Լաւագոյնն է ամենից լաւ. բոլորը չեն յաջողի
«Ամբողջ ապրուստն ու ամբողջ կեանքն ակսել ծայրից հիմնովին.
«Եւ ամեն մարդ չի տանջուելու՝ այլոց նման կամ թէ մեր:
«Օ՜, նա որքան մեծ բախտ ունի, որ իւր հօրից և մօրից
«Մի բարեկազմ տուն ժառանգեց և աջողակ զարգարեց:
«Ամեն բանի սկիզբն է ծանր, տնտեսութիւնն աւլի՛.
«Շատ կարիքներ մարդու ունի՝ միշտ օր աւուր ծանրացող.
«Նա միջոցներ պէտքէ գտնի, որ առատ փող վաստակէ:
«Եւ յոյս ունիմ, ո՛վ իմ Հերման, որ դու շուտով կըբերես
«Մի մատաղ հարս մեր տան համար, մեծ և հարուստ օժիտով:
«Կտրիչ մարդը արժանի՛ է մի ունևոր աղջկայ:
«Իրա՛ւ, որքան հաճելի է, երբ սիրելի կնոջ հետ
«Ներս է մտնում իւր օժիտը՝ զամբիւղներով, արկղերով:
«Իզուր չէ, որ դստեր համար պատրաստում է մայրը միշտ՝
«Կտաւեղէն, նուրբ մանուածքներ՝ տարիների ընթացքում.
«Կնքահայրը զուր չի տալիս արծաթեղէն սպասներ,
«Եւ իւր հայրը չքնաղ ոսկին զուր չի պահում արկղի մէջ:
«Ուզում է նա՝ ապագայում ուրախանայ այն տղան,
«Որը բոլոր աղջկանց մէջ իւր դստերն է ընտրելու:
«Այո՛, գիտեմ, թէ հարսն ինչքան պէտքէ հրճուի այն տան մէջ,
«Ուր սենեակում, խոհանոցում իւր իրերն է միշտ տեսնում,
«Եւ անկողինն ու սեղաններն ինքն է բանում կամ ծածկում:
«Այսպէս ուրեմն օժիտով հարս կուզեմ տեսնել իմ տան մէջ,
«Որովհետև աղքատ կինը կարհամարհուի ամուսնուց,
«Եւ կըպահուի աղախնի պէս՝ մի կապոցով ներս մըտնող:
«Զո՛ւր են մարդիկ շատ սպասում, սիրոյ տարիքն անցնում են:
«Այո՛, այո՛, իմ ծերութիւնն ուրախ կանցնի, ո՛վ Հերման,
«Եթէ շուտով կարողանաս մի հարսնացու քեզ բերել
«Մեր հարևան դրացիներից, կանաչ ներկած այն տանից:
«Ցիրաւի, նա շատ է հարուստ. գործարաններն օր աւուր
«Աւելի են հարստացնում. վաճառական մարդո՛ւ ինչ:
«Միայն երեք աղջիկ ունի, որոնք տէր են իւր կայքին.
«Մեծը վաղուց է նշանուել, իսկ միջնակն ու կրտսերը

«Մընում են դեռ. սակայն շուտով նոցա հերթն էլ կըհասնի:
«Եթէ քո տեղ ես լինէի, կզուրս չէի ուշանայ,
«Իսկայն մէկին ինձ կընտրէի, ինչպէս քո մօրն ընտրեցի:
Համեստութեամբ որդին ասաց իւր թախանձող ծնողին.
«Իրա՛ւ, ես էլ ուզում էի հարևանի դստերից
«Մէկին ընտրել: Միասին ենք մեր օրերը անցրել.
«Մենք շուկայի ջրհորի մօտ խաղում էինք միատեղ.
«Տղաների չարութեան դէմ պահպանել եմ նրանց յաճախ:
«Բայց այդ օրերն արդէն անցան. աղջիկները, ի հարկէ,
«Մեծանալով, էլ դուրս չեկան, խուսափեցին խաղերից:
«Ո՞՛նք չգայ, որ լաւ են կրթուած: Ձեր ցանկութեան համաձայն,
«Իբրև նախկին ծանօթ ընկեր գնում էի նոցա մօտ:
«Բայց ես նոցա ընկերութեամբ ուրախութիւն չտեսայ.
«Նոքա ինձ միշտ ծաղրում էին, և պէտք է լռէի:
«Սերթուխ՝ երկար, մահուզը՝ կոշտ, գոյնով նոյնիսկ հասարակ,
«Լաւ չէր սանրած իմ գլուխը, գանգուրներս՝ անկանոն:
«Յետոյ հագնել ես ցանկացայ գորգակատաւը մարդկանց պէս,
«Որ կիրակի օրերն այնտեղ գալիս էին վայելելու,
«Իսկ ամառը թափառում են բարակ, մաշուած շորերով:
«Բայց ես շուտով նկատեցի, որ ծաղրում են ինձ կրկին.
«Եւ այդ շատ ցաւ պատճառեց ինձ, վիրաւորեց իմ երը.
«Նոքա երբէք չհասկացան զգացմունքներն իմ սրտի,
«Որ ունէի դէպի նոցա, և կըրտսերը մանաւանդ:
«Զատկի տօնին վերջին անգամ ես գընացի նոցա տուն.
«Հագել էի նոր զգեստս, որ կախուած է դարակում.
«Եւ մտերս սանրել էի, ինչպէս ուրիշ պատանիք:
«Հէնց ներս մըտայ, քրքջացին. բայց իմ վերայ ես չառայ:
«Փոքրիկ Մինսէն դաշնակի մօտ նստած էր, և նորան
«Լսում էր իւր ծերունի հայրն, հրճւում էր ու ցնծում:
«Շատ բան չէի ես հասկանում նորա երգի խօսքերից.
«Սակայն յաճախ լսում էի Պամինա եւ Տամինո[1]:
«Զուզեցի, որ ես լուռ մընամ. և երբ երգը վերջացաւ,

[1] Մոցարտի «կախարդական սրնգի» սիրահար զոյգը:

«Հարցրի նոցա երգի մասին և այն երկու անձերի:
«Նոքա վերաս ծիծաղեցին. իսկ նոցա հայրն ինձ ասաց.
«Ճշմարիտ չէ՞, միայն Եւան և Ադամը դու գիտես:
«Ոչ ո՛ք իրեն էլ չպահեց. անզուսպ ծիծաղ բարձրացաւ.
«Աղջիկ, տղայ՝ քրքջացին, վերը բռնեց ծերունին.
«Գլխարկս ընկաւ իմ յուզմունքից, և քանի դեռ այդ երգերն
«Հնչում էին սենեակի մէջ, բարձրանում էր այդ քրքիջ,
«Ես կարմրած ու զայրացած շուտ վազեցի դէպի տուն,
«Դէն ձգեցի զգեստն խսկոյն, գանգուրներս խառնեցի,
«Երգուելով, որ էլ իմ ոտքը նոցա շէմքը չդնեմ:
«Եւ իրաւունք ունէի ես, հարատ են նրանք, սիրազուրկ.
«Լսել եմ ես, որ դեռ այժմ էլ կանչում են ինձ Տամինո:
Մայրը որդուն այսպէս ասաց. «Զպէտք է դու, ո՛վ Հերման,
«Այսքան երկար խռով պահես, որովհետև մանուկ են:
«Մինսէն, իրա՛ւ, խելօք է շատ և բարեմիտ դէպի քեզ.
«Անցեալ օրերն հարցնում էր քեզ. պէտք է նորան դու ընտրես:
Իսկ մտախոհ որդին ասաց. «Ես չգիտեմ. սրտիս մէջ
«Դրոշմուած է դեռ այդ զայրոյթն. էլ չեմ կարող ես նորան
«Դաշնամուրի մօտին տեսնել, ափանջ գնել երգերին:
Հայրը որդուց խիստ զայրացաւ ու ձայն տուեց բարկացկոտ.
«Ես քեզանով չուրախացայ. շատ անգամ եմ այս ասել,
«Երբ սէրդ քեզ մղում էր միշտ միայն դէպի արտն ու ձին:
«Ինչ որ ծառան է կատարում մի ունևոր տան համար,
«Այն ես անում. և խեղճ հայրը ձեռք է վերցնում այն որդուց,
«Որ պէտք է իւր յարգ ու պատիւն տուեցանէր քաղաքում:
«Մայրդ միշտ էլ հէնց սկզբից խաբում էր ինձ սին յոյսով,
«Երբ ես գանգատ էի անում, թէ դու երբէք այլոց պէս
«Զէիր կարդում, չէիր գրում, յետինը միշտ մընալով:
«Եւ այդպէս էլ պէ՛տք է լինի, երբ պատանու կրծքի մէջ
«Զկայ պատուի սուրբ զգացմունք և լաւ բանի չի ձգտում:
«Որքան որ ես հոգ տարայ քեզ, հայրս այնքան ինձ հոգաբ,
«Եւ ուղարկէր ուսումնարան, ուսուցիչներ թէ վարձէր՝
«Մեծ կըլինէր առաւելանը, քան որ այժմ ես ունեմ:
Բայց որդին շուտ ոտքի ելաւ, սուս դրանը մօտեցաւ՝

Դանդաղաքայլ և լուռ ու մունջ. հայրն աւելի դայրացած՝
«Կորիր գնա՛, ասաց Նորան, յամառութիւնդ ես գիտեմ,
«Շո՛ւտ հեռացիր և գործիդ կաց, որ ամօթանք չկրես:
«Բայց քո մրաքով երբէք չանցնի, որ մի անտաշ դեղջկուհի
«Համարձակուես մեր տուն բերել՝ իբրև ընտիր հարսնացու:
«Շատ եմ ապրել, կարող եմ ես ամենքի հետ լաւ վարուել,
«Պարոններին, տիկիններին իրենց սրտով մեծարել.
«Եւ բացի այդ ես լաւ գիտեմ սիրտը շահել օտարի:
«Բայց պէտք է որ մի մատաղ հարս վոխարինէ այդ ամենն
«Ու վերջապէս իմ բազմաթիւ տանջանքներին վարձը տայ,
«Դաշնամուրին վրայ նուագէ. և պէտք է ես հաւաքեմ
«Այս քաղաքի հռչակաւոր և լաւագոյն անձերին,
«Ինչպէս որ այդ կիրակի օրն անում է մեր դրացին:
Որդին սեղմեց տան դռնափակն ու հեռացաւ սենեակից:



Դ. ԹԱԼԻԱ[1]

Քաղաքացիք

Այսպէս վախաւ համեստ որդին հօր բարկացայտ խօսքերից:
«Հայրը սակայն շարունակեց իւր զրոյցը նոյն ոգով.
«Ինչ որ չկայ մի մարդու մէջ՝ չի պահանջուի Նորանից.
«Ես յոյս չունեմ, թէ կիրանդամ՝ իմ բաղձանքին հասնելով,
«Երբ չի լինի որդին հօր պէս, այլ մի բանով աւելի:
«Ի՞նչ կը լինէր, արդեօք, մի տուն, ի՞նչ կը լինէր մի քաղաք,
«Թէ ամեն մարդ յօժար սրտով չպահպանէր, Նորոգէր
«Այնպէս, ինչպէս ժամանակը և աշխարհն են ցոյց տալիս:

[1] Կատակերգութեան եւ հովուերգութեան մուսան, երգիչական կամ հովուական գաւազանը ձեռին:

«Զպէտք է մարդ ինչպէս մի սունկ երկրից բուսնի և փտի
«Հէնց նոյն տեղում, որը Նորան բուսցրել է իւր ծոցից,
«Ոչ մի նշան չթողնելով իւր կատարած գործերից:
«Մարդ տան տեսքից Նորա տիրոջ ներքինն է միշտ ճանաչում,
«Ինչպէս քաղաքն այցելողը՝ պաշտօնատէր անձերին.
«Որովհետև ուր քանդուած են աշտարակներն ու պատերն,
«Ուր վոսերում, վողոցներում աղտեղութիւն է դիզուած,
«Ուր չարուածքից ընկնում է քարն ու էլ տեղը չի գրւում,
«Որտեղ վիթած են գերաններ և ուր տնակն իզուր տեղ
«Սպասում է նոր մոյթերի,—այնտեղ չկայ լաւ վարիչ.
«Ուր բարձրից չեն պահանջում կարգ ու կանոն, մաքրութիւն,
«Այնտեղ կեղտոտ մեղկութեան են ընտելանում անհատներ,
«Ինչպէս անճար մուրացկանը՝ պատառոտուած ցնցոտուն:
«Ուստի և ես շատ եմ ուզում, որ իմ Հերմանն անյապաղ
«Ուղևորուի և գէթ տեսնէ՝ Շարասբուրգն ու Ֆրանկֆուրտ,
«Նուիրական մեր Մանհայմը՝ վերաշինուած, գեղեցիկ,
«Որովհետև ով որ տեսնի մեծ և մաքուր քաղաքներ,
«Իւր քաղաքն էլ կը բարուոքէ, եթէ նոյնիսկ փոքր է այդ:
«Մեր նորոգուած դարպասները օտարները չե՞ն գովում,
«Ճերմակ գոյնի աշտարակն էլ, վերաշինուած տաճարն էլ:
«Ձե՞ն հաւանում մեր մայթերը և ծածկուած, ջրաշատ,
«Լաւաբաժան ջրմուղները, որ տալիս են մեծ օգուտ,
«Նոր բռընկուող հրդեհի դէմ խսկոյն և եթ առնելով:
«Այս բոլորը գլուխ չեկան մեծ հրդեհից դեռ առաջ:
«Ես վեց անգամ շինուածքների վերատեսուչ կարգուեցայ
«Եւ մեր բարի քաղաքացոց գոհութիւնը ստացայ:
«Ինչ ասէի, անում էի. և ուղղամիտ մարդկանցից
«Թերի թողած շատ-շատ գործեր գլուխ էի հանում ես:
«Եռանդ ծընաւ մեր խորհրդի անդամների սրտերում.
«Այժմ բոլորն աշխատում են և արդէն նոր խճուղին,
«Որ կապւում է մեծ ճամբի հետ, որոշուած է, հաստատուն:
«Սակայն շատ եմ վախենում ես, որ պատանիք այդ չանեն:
«Որովհետև ոմանք քէֆի, զարդի մասին են հոգում,
«Ոմանք տան մէջ կուչ են գալիս, կրակի մօտ թուխս նստում.

«Վախենում եմ, որ Հերմանն էլ նոցա նման միշտ մնայ։

Իսկոյն բարի, խելօք մայրը պատասխանեց ամուսնուն.

«Դու միշտ այդպէս անարդար ես դէպի որդիդ. այդ լաւ չէ.

«Ուստի և քո բաղձանքներից շատ քչերն են կատարւում։

«Չենք կարող մենք որդոց դարձնել մեր մտքերի համաձայն.

«Աստուած ինչպէս պարգևեց մեզ՝ պէտքէ պահենք ու սիրենք,

«Եւ լաւագոյն կրթութիւն տանք, իւր հակումը չխեղդենք,

«Բանդի մէկին այս շնորհն ունի, իսկ երկրորդը՝ ուրիշ ձիրք։

«Իւրաքանչիւրն օգտւում է, և ամեն ոք իւր չափով

«Ե՛ւ երջանիկ, և՛ բարի է։ Մեզ չեմ դնում Հերմանին,

«Արժանի՛ է այն բոլորին, ինչ որ պէտքէ ժառանգէ։

«Լաւ անտես է՝ քաղաքացոց ու գիւղացոց օրինակ.

«Խորհրդի մէջ, գուշակում եմ, նա յետինը չի լինի։

«Բայց ամեն օր կշտամբելով, նախատելով՝ նորա մէջ

«Ամեն աշխոյժ դու կըխեղդես, ինչպէս արիը հէնց այսօր։

Եւ նա թռաւ սենեակից դուրս, գընաց որդու յետևից՝

Գտնէ նորան, ուրախացնէ գորովալի խօսքերով,

Որովհետև ազնիւ որդին արժանի էր այդ բանին։

«Երբ մայրն արդէն դուրս էր եկել, հայրը խօսեց ժպտալով.

«Զարմանալի բան են կանայք, նոյնն են, ինչ որ պատանիք.

«Ամեն մէկը ուզում է, որ ինքնագլուխ կեանք վարէ.

«Եւ դեռ նոյնիսկ ուրիշներից գովասանք են պահանջում։

«Պահում է միշտ նախնեաց առածն արժէքաւոր իւր խմաստն.

«Ով չի գնում դէպի առաջ, յետ է գնում. այդպէս է։

Այնուհետև պատասխանեց դեղագործը՝ ծանրախոհ.

«Համաձայն եմ, պարո՛ն դրացի. ինքս լաւն եմ փնտրում.

«Եթէ միայն իմ փնտրածը շատ թանկ չարժէ, բայց նոր է։

«Բայց ինչ օգուտ, երբոր մարդս առատ դրամ չունենայ,

«Ձիրը լինելով կարող է տան դուրս ու ներսը նորոգել։

«Բաղաքացին շատ է ճնշուած. թէ լաւ բան իսկ ճանաչէ,

«Նա չի կարող հասնել նորան. շատ խղճուկ է իւր քսակն,

«Իսկ կարիքը չափազանց մեծ. ահա և քեզ խոչընդոտ.

«Շատ-շատ բաներ ես կանէի. բայց ո՞վ, արդեօք, չի սոսկում

«Այդ նորոգման մեծ ծախսերից, մանաւանդ մեր ժամանակ։

«Տունս արդէն ժպտում էր ինձ նոր ճաշակի զարդերով,

«Եւ դեռ երկար շողում էին պատուհանիս ապակիք.

«Բայց ո՞վ, արդեօք, վաճառական հարուստ մարդուն կըհասնի,

«Որ փողի հետ հնարք ունի լաւագոյնը գտնելու։

«Տե՛ս առաջիդ այդ նոր տունը. կանաչ գոյնի երեսում

«Ոլորածոյ կճածելիք ինչ սիրուն է երևում.

«Ո՞րքան մեծ են, ինչ շողում են պատուհանի ապակիք,

«Որ շուկայի միւս տներ նսեմանում են այդ փայլից.

«Բայց հրդեհից դեռ յետոյ էլ մերոնք էին գեղեցիկ՝

«Հրեշտակի գեղատունը, Ոսկի-Առիւծ հիւրանոցն.

«Այդպէս ահա իմ պարտէզն էլ հռչակուած էր ամեն տեղ.

«Ամեն ճամբորդ կանգ էր առնում կարմիր դռնից նայելու

«Բարից շինած մուրացկանին և գունաւոր գաճաճին։

«Ում որ շքեղ քարայրի մէջ ես սուրճ էի մատուցում,

«Այն քարայրի, որ յերաւի, փոշոտ է արդ և խարխուլ,

«Հրճւում էր նա գեղեցկաշար խեցիների ճաճանչով,

«Որ ցոլում էր վառ, երփներանգ. և շլացած աչքերով

«Զննողն ինքը նկատում էր կապարի փայլ և բուստեր։

«Նոյնպէս պակաս սիրուն չէին մեր սրահի նկարները,

«Ուր տիկնանց հետ շրջում էին պարոնները պըճնուած,

«Նուրբ մատներով ծաղիկները հրամեցէք անելով։

«Էլ ո՞վ կուզէ նոցա տեսնել. դժգոհ եմ ես ներս մտնում.

«Արդ ամեն բան պէտքէ փոխուի, կամ թէ, ինչպէս ասում են,

«Ճաշակաւոր պէտքէ լինի, ձոլ, նըստարան՝ սպիտակ։

«Արդ ամեն բան պարզ է և հարթ, քանդակ, դրուագ չեն սիրում.

«Դրսից այստեղ բերած փայտի գինն էլ այժմ թանկ է շատ.

«Մեծ հաճուրթեամբ ես կուզէի նոր-նոր բաներ ձեռք բերել,

«Դարուս ոգով առաջ գնալ, իրերս յաճախ փոփոխել.

«Բայց ամեն մարդ վախենում է չնչին բան իսկ անելուց,

«Որովհետև մարդ չի կարող բանուորներին վըճարել։

«Մօտ օրերս մտածեցի մեր դեղատան ցուցանակն

«Եւ Միքայէլ-Հրեշտակապետն ու ոտքի տակ դալարուող

«Այն ահռելի մեծ վիշապը ոսկեզօծել տալ նորից,

«Սակայն կրկին այնպէս մընաց, զարհուրեցի վըճարից։

Դ. ԵՒՏԵՐՊԷ[1]

Մայր եւ որդի[2]

Այսպէս մարդիկ խօսում էին՝ զրուցելով միմեանց հետ.
Այդ միջոցին մայրը գնաց որոնելու իւր որդուն՝
Նախ տան առաջ, որտեղ քարէ նստարանն էր գտնւում,
Ուր նստում էր նորա որդին. իսկ երբ այստեղ չգտաւ,
Գընաց ախոռ, թերևս այնտեղ որդին կեր տար ձիերին,
Որ իւր ձեռքով գնել էր նա և ինքն էր միշտ խնամում.
Սակայն ծառան ասաց նորան. «պարտէզ է նա գնացել»:
Այն ժամանակ, արագ անցաւ լայն բակերը կրկնակի,
Իւր յետևից թողեց նա դոմն ու մառաններն ամրաշէն,
Մտաւ պարտէզ, որ քաղաքի պարիսպներին էր հասնում,
Կտրեց, անցաւ, միշտ հրճուելով իւրաքանչիւր կանաչով.
Խեչակները տեղն էր գնում, որոնց վերայ խնձորու
Ոստերը էին ցած կռացել և տանձենու շատ ճիւղեր.
Իսկ ուռուցիկ կաղամբները թրթուռներից էր մաքրում,
Որովհետև աշխոյժ կինը ոչինչ լզուր չի անում:
Այսպէս հասաւ մինչև ծայրն երկայնաձիգ պարտիզի,
Ու հովանոցն՝ այծատերև բոյսերով խիտ ծածկուած.
Որդին չկար. լզուր էր նա մինչև այժմ որոնել:
Կիսաբաց էր դռնակն այնտեղ, որ մասնաւոր շնորհով
Մի նախահայր՝ ժամանակին արժանաւոր տանուտէր,
Բաց էր արել այդ քաղաքի պարիսպների մէջտեղից:

---

1 Քնարական բանաստեղծութեան մուսան եւ սենգահարութեան հովանաւորը, սինգը ձեռքին:

2 Բանաստեղծը մի շարք գործողութիւններ ստեղծելով՝ տալիս է Հերմանի հոր տնտեսական վիճակի նկարագիրը:

Նա գնալով՝ չոր փոսերից դէպի այն կողմ անցկացաւ,
Ուր որ շաւղից բարձրանում էր պարտէզն ուղիղ դէպի վեր՝
Ցանկով պատած, ոլորապտոյտ ուղիներով, արևդէմ:
Նա վեր եկաւ՝ պտուղների առատութեամբ հրճուելով,
Որոնք աչքից հազիւ էին տերևներով ծածկուել:
Ստուերոտ էր և ծածկուած միջից անցնող ծառուղին,
Ուր որ մարդիկ ելնում էին անտաշ քարէ սալերով.
Այդտեղ վերից կախուել էին սև խաղողն ու մշկահոտ՝
Կարմիր, կապոյտ և քովէ քով, մի առանձին մեծութեամբ,
Խնամքով տնկուած, որ հիւրերի աղանդերքը զարդարեն:
Միւս մասը ծածկուած էր միայն հատ-հատ որթերով,
Որոնց մանրիկ ողկոյզները տալիս էին լաւ գինի:
Առաջ անցաւ, և հրճուում էր՝ միշտ աշունը յիշելով
Եւ տօնական ուրախ օրերն, երբ տեղացիք երգելով
Հաւաքում են, ճմլում խաղողն, հիւթն ածելով տակառում.
Երեկոյեան՝ հրավառութիւն, ամեն կողմ լոյս և ճայթիւն.
Եւ տօնում է հընձերի մէջ հրաշալին այդպիսով.
Անհանգիստ էր առաջ գընում. այդ ժամանակ իւր որդուն
Կանչեց՝ երկու, երեք անգամ, և արձագանքն յետ եկաւ
Ու քաղաքի մեծ շէնքերից այնտեղ հասաւ հնչուելով:
Նա սոսկալի չէր որդուն փնտռել, որ հեռու տեղ չէր գընում
Եւ առաջուց յայտնում էր միշտ, որ սիրելի ծնողի
Դառը հոգսերն ու փորձանքի սարսափները փարատէ:
Մայրը սակայն դեռ յոյս ունէր ճամբի վերայ գտնելու,
Որովհետև ցածի դուռն էլ բաց էր նոյնպէս պարտիզում
Վերինի պէս: Նա այստեղից կտրեց անցաւ դէպի դաշտ,
Որ այդ բլրի հարթ փէշերը լայնասփիւռ ծածկել էր:
Շրջում էր դեռ իւր սեպհական հողի վրայ և հրճուում
Իւր արտերով, դեղատեսիլ, ցած կռացած հասկերով,
Որ ոսկեփայլ, ալեծածան ծփում էին դաշտի մէջ:
Ցանքի միջով առաջ անցաւ, սահմանի վրայ, նուրբ շաւղով
Եւ երենց տան կալուածների սահմանները որոշող
Բլրի վերայ մի տանձենի աչքի առաջ պահելով.
Ո՞վ էր տնկել, յայտնի չէր այդ. շրջակայքում շատ հեռուից

Երևում էր. պատուղներով դուվելի էր տանձենին.
Ճնճուղները սովորաբար ճաշում էին նորա տակ,
Իսկ հովիւներն հանգիստ առնում իւր զովաշունչ ստուերում,
Այնտեղ գտնում իրենց համար անտաշ քարէ նստարան:
Զէր սխալուել. Հերմանն այնտեղ նստած հանգիստ էր առնում.
Եւ իւր ձեռքի վերայ կռթնած՝ նայում էր նա լեռներին,
Դէպի այն կողմ. մօր կողմն էր նա իւր կռնակը դարձրել:
Կամաց-կամաց մայրը եկաւ, որդու ուսը մեղմ շարժեց.
Նա շուռ եկաւ. նորա աչքերն արտասուքով լի էին:

«Մայր, ասաց նա յուզուած սրտով. դուք ինձ խելքից հանեցիք.
Եւ պատանին սուրբ զգացմամբ սրբեց արցունքն աչքերից:
«Ի՞նչպէս, որդեակ, լալիս ես դու, ծնողն ասաց արտայոյզ.
«Կարծես թէ այդ դու չլինես. ես չեմ տեսել քեզ այդպէս.
«Ի՞նչ է, ասա, սիրտդ ճմլում, ի՞նչն է դրդում, որ այդպէս
«Մենակ նստես տանձենու տակ, ի՞նչ է պատճառն արցունքիդ:

Ապնիւ որդին մօր խօսքերից ուշքի եկաւ և ասաց.
«Ճշմարիտ որ նա սիրտ չունի իւր կապարեայ կրծքի մէջ,
«Ով տնազուրկ, անբախտ մարդկանց կարիքները չի զգում:
«Նա խելք չունի իւր գլխի մէջ, որ սեպհական իւր շահեր
«Ու հայրենեաց օգուտներն այս օրերում չի հոգում:
«Ինչ լսեցի, այսօր տեսայ՝ շատ վրդովեց իմ հոգին.
«Եւ դուրս գալով տեսայ սիրուն մեր դաշտերը լայնատիւռ,
«Որ պատում են երկրի պէս այս բլուրներն արգաւանդ,
«Ոսկի հասկեր՝ լի հատիկով, ծանրութիւնից կռացած,
«Որ պաշարով առատ լեցուն ամբարներ են խոստանում:
«Ա՜խ, Թշնամին մրքան մօտ է. Հռենոսի ալիքներն
«Արդարև, մեզ կրպահպանեն. բայց ա՜խ, ինչ են ալիք, լեռ
«Այն ահարկու ամբոխի դէմ՝ փոթորկի պէս մօտեցող:
«Ամեն կողմից հաւաքելով թէ պատանի և թէ ծեր՝
«Բուռն հոսանքով ընթանում են, և ամբոխը մահուանից
«Զի՛ վախենում. խումբը խմբի յետևից է սլանում:
«Գերմանացին վրեժ է արդ իւր տան մէջը դեռ մընալ,
«Սպառնացող չարիքներից խուսափելու յոյս ունի:
«Սիրելի՛ մայր, լա՛ւ իմացէք, շատ եմ այսօր զայրանում,

«Որ քաղաքի ընակիչներից գօրաժողով անելիս՝
«Ինձ վրկեցին. ճշմարիտ է, որ ես միակ ժառանգն եմ.
«Շատ մեծ է մեր տնտեսութիւնն ու գործերը՝ կարևոր.
«Բայց աւելի լաւ չի՞ լինի, որ Թշնամուն սպասեմ
«Սահմանի մօտ, քան թէ այստեղ ստրկութեան ու վրշտի:
«Այդ ինձ հոգի՛ս թելադրեց. վառւում է իմ կրծքի մէջ
«Տենչ ու ծարաւ՝ հայրենիքի համար ապրեմ ու մեռնեմ
«Եւ այսպիսով ուրիշներին տամ մի ազնիւ օրինակ:
«Եւ յիրաւի. թէ Գերմանիոյ թարմ այծերը միասին
«Սահմանի մօտ հաւաքուէին, որ դէմ դնեն Թշնամուն,
«Օ՜, անկասկած չէին մանի մեր դաշտերըն արգաւանդ,
«Եւ մեր երկրի պատուղները չէ՞ին կարող վայելել՝
«Տգամարդկանց հրամայել, կին ու աղջիկ վախցնել:
«Իմացէք, մայր, սրտիս խորքում վրեժ է եմ ես, որ խսկոյն
«Կատարեմ այն, ինչ որ գիտեմ, թէ արդար է, խելացի.
«Ով որ երկար կրմտածի, միշտ լաւը նա չի ընտրի:
«Իմացէք, որ տուն չեմ դառնայ. գնում եմ հէնց այստեղից
«Դէպի քաղաք, և այս բաղուին, իմ այս սիրտը պէտք է տամ
«Մարտիկներին՝ ծառայելու հայրենիքի շահերին:
«Թող շարունակ հայրս ասէ, թէ նաև իմ որդի մէջ
«Զկայ պատուի սուրբ զգացմունք և չեմ ձգտում դէպի վեր:

Բարի, խելօք մայրը նորան պատասխանեց լրջութեամբ,
Լռիկ արցունք կաթկթելով, որ պատրաստ էր աչքերում.
«Ինչի՞, որդեակ, այդպէս փոխեց քեզ և քո սիրտն ու հոգին,
«Որ համարձակ ինձ չես պատմում՝ ինչպէս երէկ կամ առաջ,
«Եւ չես ասում, թէ որտիդ մէջ ինչ բաղձանքներ ունիս դու:
«Թէ քեզ լսէր մի ուրիշ մարդ, նա յիրաւի պիտ գովէր
«Եւ քո վճիռն իրրև ազնիւ և անմեղ բան կրյարգէր՝
«Հրապուրուելով քո խօսելուց և լրջամիտ խօսքերից:
«Սակայն ես քեզ մեղադրում եմ. գիտես, լա՛ւ եմ հասկանում,
«Թէ քո սիրտը ծածկում ես դու և ունես այլ խորհուրդներ:
«Քանզի գիտեմ՝ քեզ չեն կանչում ոչ թմբուկը, ոչ շեփոր,
«Ոչ էլ կուզես համազգեստով օրիորդներին երևալ.
«Այլ կոչումդ է՝ ամեն դէպքում քաջ և արի լինելով,

«Տունը պահել և մեր դաշտերն հանդարտութեամբ խընամել։
«Ասա անվախ, ինչ քեզ դրդեց, որ այդպիսի վճիռ տաս։
Լուրջ, մտախոհ ասաց որդին. «Սխալւում էք, ո՛վ մայրիկ.
«Երէկ ուրիշ, այսօր ուրիշ. մարդ է դառնում պատանին
«Աւելի շուտ անդորրութեամբ, քան ժխորով մի կեանքի,
«Որ վայրենի, երերուն է և շատերին է կորցրել։
«Թէև հանգիստ եմ մեծացել, բայց իմ կրծքում ես ունեմ
«Առնական սիրտ, որ անիրաւն ու ստութիւնն է ատում։
«Ես լաւ գիտեմ չարն ու բարին զանազանել միմեանցից.
«Եւ աշխատանքն այժ է տուել բաղուէներիս, ոտքերիս.
«Այս բոլորը ճշմարիտ են և կարող եմ հաստատել։
«Բայց Ձեր խօսքն էլ տեղին է, մա՛յր. բռնել էք Դուք շատ անգամ
«Բերնէս ելած կէս ձեւական ու կէս ուղիղ իմ խօսքերն.
«Ուստի պէտք է խոստովանեմ. հայրենական իմ տընից
«Մօտիկ վոր ձանքն ինձ չի կորզում, ոչ էլ այն մեծ բաղձանքը,
«Թէ ես կօգնեմ հայրենիքիս, սարսափ կաղդեմ թշնամուն։
«Ատածներս խօսք էին լոկ, որոնք պէտք է քեզանից
«Թագցնէին խորհուրդներս, որ իմ սիրտն են խռովում։
«Թողէ՛ք ինձ, մա՛յր, որովհետև դատարկ ըղձեր ես ունիմ
«Այս կրծքի մէջ. թո՛ղ ապարդիւն անցնի իմ կեանքն աշխարհում.
«Ես լաւ գիտեմ, միայնակ մարդն ինքն իրեն է վընասում՝
«Զոհ դընալով, երբ չեն ձգտում բոլոր մարդիկ նոյն բանին։
«Շարունակի՛ր, ծնողն ասաց բարի, խելօք իւր որդուն.
«Ասա բոլոր բաղձանքներդ, նոյնիսկ ամեն չնչին բան.
«Որովհետև բուռն են մարդիկ, վերջինն են միշտ մտածում.
«Իսկ տաքարիւն մարդուն արդելքն հեշտ է շեղում իւր ուղուց։
«Կինն աջողակ հնարագէտ է. գտնում է նա կարճ ուղին՝
«Ճարտարութեամբ իւր որոշած նպատակին հասնելու։
«Դէ՛հ, ասա ինձ, ինչո՞ւ ես դու այդպէս սասակիկ վրդովուած.
«Երբէք այսպէս քեզ չեմ տեսել. եռում է արդ քո արիւն,
«Ակամայից աչքերիդ մէջ ջերմ արտասուք շողշողում։
Բարի տղան խիստ վշտացաւ ու մօր կրծքին յենուելով՝
Աղիողորմ սկսեց ողբալ. հանդարտուելով այս տաց.
«Իրա՛ւ, հօր սուր կշտամբանքն իմ սիրտն այսօր խոցոտեց,

«Որին չէի արժանացել թէ անցեալում, թէ այսօր։
«Ծնողներիս յարգելն էր միշտ ամենից թանկ ինձ համար.
«Եւ ոչ ոք ինձ չէր երեւում աւել՝ խելօք եմաստուն,
«Քան մանկութեան մութ օրերում լուրջ հրամայող ծնողներս։
«Իմ խաղակից ընկերներից շատ բան տարայ յիրաւի,
«Երբ իմ սիրոյ հատուցումը նենգութիւնն էր միշտ լինում.
«Ցաճախ քարի, ծեծի համար վրէժխնդիր չեմ եղել։
«Իսկ հայրիկի՛ս թէ ծաղրէին, որ կիրակի օրերում
«Եկեղեցուց դալիս էր տուն պատկառելի, ծանրաբայլ,
«Իւր գլխարկի կարմիր երիզն ու վերարկուն ծաղրէին,
«Որ վայելուչ հագնում էր նա և որ տուինք խեղճերին,
«Սեղմում էի կատաղութեամբ իմ բռունցքներն, յարձակւում
«Մոլեգնութեամբ դարկում էի և հարուածում կուրօրէն,
«Ուր որ դիպչէր. ճչում էին՝ արիւնոտուած քթերով,
«Հաղիւ վախչում իմ կատաղի քացիներից, հարուածից։
«Եւ ես այսպէս աճում էի՝ հօրս ցաւեր տանելու,
«Որ շատ անգամ ուրիշի տեղ ինձ էր խօսքով նախատում,
«Երբ խորհրդի վերջին նիստից տուն էր գալիս դայրացած.
«Ընկերներսի դէմն ու վէճը քաւում էի այդպիսով։
«Ցաճախ վերան՝ ցաւում էիք. բա՛ն չմնաց, ես տարայ՝
«Միշտ այն մտքով, որ ես որտանց ծնողներիս միշտ յարգեմ,
«Որ հոգում են որդոց համար ինչք ու բարիք ժողովել,
«Եւ զրկում են յաճախ իրենց, որ խեղճ որդոց պահպանեն։
«Ապագայն այդ օգտակար խնայելուց չէ միայն
«Բարիք լինում. ոչ էլ դէպք դիպի վերայ բարգելուց
«Կամ լաւագոյն արտը արտին մնացնելուց է լինում։
«Հայրը մի օր կրծերանայ և նորա հետ իւր որդիք՝
«Առանց մի օր վայելելու, միշտ վաղուան օրն հոգալով։
«Շուրջս, տեսէ՛ք, ինչ վառահեղ տարածուել են դաշտերը՝
«Սիրո՛ւն վարթամ, ցաճում պարտէզն ու այգին.
«Այնտեղ՝ գոմեր և ամբարներ, գեղեցիկ շարք դոյքերի։
«Սակայն երբ որ նայում եմ ես տան յեռէի մասերին,
«Տանիքի տակ իմ խցիկի պատուհանին՝ վայլվլող,
«Իմ անցեալն եմ մտաբերում. քանի՞ քանի՞ գիշերներ

«Սպասել եմ այնտեղ լուսնին, առաւօտներն՝ արևին,
«Երբ կաղդուրիչ քնի համար կարճ միջոց էր հարկաւոր:
«Ա՜խ, այդ ժամին թւում է ինձ, թէ մեր բակը և այգին,
«Բլրից այն կողմ վառուող դաշտերն ամայի են խոցիս պէս.
«Անապատ է ամենն աչքիս. ա՜խ, ամուսին ես չունեմ:

Նորան այսպէս պատասխանեց բարի, խելօք իւր մայրը.
«Եթէ, որդեակ, ուզում ես դու մի հարսնացու քեզ բերել,
«Որ գիշերը կեանքիդ սիրուն կէսը դառնայ քեզ համար
«Եւ օրական աշխատանքդ ազատ, ուրոյն լինի միշտ,
«Ծնողներից այդ աւելի չես ցանկանայ դու երբէք:
«Միշտ ասել ենք, միշտ էլ դրդել, որ մի աղջիկ ընտրես դու:
«Սակայն գիտեմ և հէնց այժմ էլ ասում է ինձ իմ սիրտը,
«Երբ չի հասել իսկական ժամն, որ ընտրելին երևայ,
«Պէտք է մնայ դեռ ընտրութիւնն, ու ամենից աւելի
«Սխալուելու երկիւղն է մեզ տարտամ ազդում այս ժամին.
«Ասե՛մ, որդեակ, կարծեմ արդէն ընտրել ես դու հարսնացուդ.
«Սիրտդ այժմ զարնուած է և զգայուն, քան առաջ:
«Ասա՛ անվախ, որովհետև արդէն հոգիս վկայեց.
«Փախստական աղջի՛կն է այդ, որին ընտրել ես այսօր:

«Սիրելի՛ մայր, ճի՛շտ ասացիր, խօսեց որդին սթափուած.
«Նա՛ է, այո՛, և հէնց այսօր թէ չբերեմ ես նորան
«Դէպի մեր տունն՝ ինձ հարսնացու, և թէ կորչի դիւրութեամբ՝
«Պատերազմի, իրարանցման և թափառման միջոցին,
«Այն ժամանակ ընդ միշտ իսպառ պէտքէ ծողկեն ինձ համար
«Մեր դաշտերը, դալոց տարիք գո՛ւր բարերեր պիտ լինին:
«Մեր այս տունն էլ, մեր պարտէզն էլ ինձ տաելի են թւում.
«Աւա՜ղ, նոյն իսկ մայրական սէրն ինձ թշուառիս չի ոլորի.
«Որովհետև աշխարհիս մէջ քանդում է սէրն ամեն կապ,
«Երբ իւր հանգոյցն է նա հիւսում. և աղջիկը չէ՛ միայն,
«Որ թողնում է ծնողներին, երբ գնում է իւր ընտրելու յետևից,
«Այլ և տղան այնուհետև չի ճանաչում հայր ու մայր,
«Երբ մինատիկ իւր սիրելուց բաժանւում է յաւիտեան:
«Ուստի թողէ՛ք, որ ես գընամ, վիատութիւնն ուր մղէ,
«Որովհետև հայրս արդէն իւր որոշումն ինձ յայտնեց,

«Եւ իւր տներն էլ իմս չեն, թէ արգելէ աղջկան,
«Միայն որին դէպի մեր տուն բերել եմ ես ցանկանում:

Իսկոյն այսպէս պատասխանեց բարի ծնողն իւր որդուն.
«Փայտի նման երկու մարդիկ կանգ են առնում միմեանց դէմ՝
«Անշարժ և յաղթ. նորա միմեանց չեն ցանկանում մօտենալ՝
«Առաջինը բարի խօսքով միւսի հետ խօսելու:
«Սակայն որդեակ, լսի՛ր դու ինձ. իմ յոյսը դեռ չեմ կորել.
«Հայրն երկուսիդ կընշանէ, թէ նա բարի է, պարկեշտ,
«Թէև աղքատ, որքան էլ որ վճռէ մերժել աղքատին.
«Որովհետև շատ բան կասէ իւր բորբոքուող ընոյթով,
«Բայց նա յաճախ չի կատարի, կրկին մերժածն հաւնելով:
«Բաղցը լեղու է պահանջում. և իւրաւո՛ւնք ունի նա,
«Զէ՞ որ հայրն է: Բարկութիւնը ճաշից յետոյ է լինում,
«Երբ խօսում է նա բորբոքուած, այլոց վատաերն հերքելիս.
«Որովհետև բուռն կամքի իւրաքանչիւր զօրութիւն
«Գրգռում է կարմիր գինին և չի թողնում որ այլոց
«Մարդ հասկանայ. ինքն իրեն է միայն լսում, հասկանում:
«Բայց երեկոն երբ հասնում է, վերջ են տալիս զրոյցին,
«Որ լինում է նորա և իւր ընկերների շրջանում.
«Արբեցութիւնն երբ անցնում է, գիտե՛մ, լաւ է նա լինում
«Եւ զգում է բարկութիւնից իրեն գործած յանցանքներն:
«Ուրեմն արի վճռե՛նք իսկոյն. ձեռներեցին կաջողուի.
«Մեզ պէտք կըգան ընկերները, որ խմբուած են նորա մօտ.
«Եւ մանաւանդ մեզ շատ կօգնէ արժանաւոր քահանան:

Այսպէս ասաց շտապելով ու վերկացաւ իւր տեղից.
Նա վերկացրեց և իւր որդուն, որ յօժար էր հետևել:
Այդ կարևոր հարցի մասին մտածելով, երկան ցած:

Ե. ՊՈԼԻՀԻՄՆԻԱ[1]

Աշխարհաքաղաքացին

Այդ միջոցին տանտիրոջ հետ գեղագործն ու քահանան
Նստել էին և շարունակ խօսում էին միմեանց հետ.
Մինչև այժմ խօսքի նիւթը միշտ միևնոյնն էր մնացել,
Որ շատ երկար ձգձգելով՝ մանրամասն քննեցին։
Մի բարեմիտ նպատակով պատուելի հայրն այս ասաց.
«Ձե՛մ ուզում ձեզ հակաճառել, դիտեմ, պէտք է մարդ ձգտէ
«Միշտ լաւ բանին. և ինչպէս որ տեսնում ենք մենք շարունակ
«Զգաում է նա բարձր բանին, նորը քիչ է որոնում։
«Բայց շատ հեռու դուք մի՛ գընաք, այս զգացմանց հետ նոյնպէս
«Բնութիւնը տուել է մեզ մի ոյժ՝ հընին յարուելու
«Եւ այն բանով ուրախուելու, որին սովոր ենք վաղուց.
«Ամեն վիճակ, որ խելացի, բնական է, այն է լաւ։
«Շատ բան կուզէ մարդ իւր համար, քիչ է նորան հարկաւոր,
«Որովհետև կարճ կեանք ունի, սահմանափակ ու նեղ բախտ։
«Ձեմ պարսաւում ես այն մարդուն, որ միշտ գործօն և անդուլ
«Թափառում է, երկրի բոլոր ճանապարհներն ու ծովերն
«Անվախ ու ժիր անցնում է նա և հրճւում է այն շահով,
«Որ լիառատ գիւղում է իւր և իւրայնոց չորս բոլոր։
«Սակայն նոյնպէս յարգում եմ այն քաղաքացուն, որ անդորը՝
«Իւր հայրենի տացուածքը պահպանում է, խնամում,
«Մշակելով իւր կալուածներն եղանակի համաձայն.
«Ամեն տարի նորա համար չեն փոփոխւում իւր արտերն,
«Ու նորատունկ իւր ծառերը չեն շտապում տարածել
«Շատ և փարթամ ծաղիկներով զուգուած ճիւղեր դէպ երկինք։
«Մարդուն պէտք է համբերութիւն, նոյնպէս մաքուր անարատ

[1] Երգի մուսան և բնարի հնարողը։

«Եւ խաղաղ միտք ու քաջառողջ և ուղղամիտ ըմբռնում.
«Չի միայն քիչ սերմ է յանձնում մայրը ոնուցիչ երկրին,
«Քիչ անասուն դիտէ միայն նա պահպանել, բազմացնել,
«Որովհետև օգտակարն է միայն նորա ուշ ու միտք։
«Երնէկ նորան, որին տուուեց այդ ընոյթը ներդաշնակ.
«Նա բոլորիս ոնունդ կրտայ. երանի այն քաղքցուն,
«Որ թէ գիւղի, թէ քաղաքի արհեստները լաւ գիտէ.
«Աղատ է նա շինականին անձուկ փակող ճընշումից.
«Բազմապահանջ քաղաքացոց հոգսը նորան չի նեղում,
«Որ ձգտում են քիչ ուժերով հարուստներին նմանուել
«Ու մեծերին. և մանաւանդ օրիորդներն ու կանայք։
«Միշտ օրհնեցէ՛ք աշխատութեան խաղաղ ջանքը ձեր որդու,
«Նոյնպէս երեն որտով ընտրած և համամիտ ամուսնուն։

Այսպէս ասաց։ Այդ միջոցին մայրը մբտաւ որդու հետ,
Որի ձեռքից բռնել էլ նա, և կանգ առաւ մարդու մօտ.
«Մարդ, ասաց նա. քանի՛ անգամ խօսել ենք մենք միմեանց հետ
«Եւ այն օրուանն ենք փափագել, որ պէտք է գար, երբ Հերմանն
«Ընտրելով իւր հարսնացուն՝ կուրախացնէր մեր որտերն։
«Այսպէս, այնպէս մտածեցինք. ծնողական զրոյցով
«Մէկ այս, մէկ այն աղջկան էինք ուզում ընտրել Հերմանին։
«Ահա այդ օրն հասաւ արդէն. հարսնացուին Ինքն Աստուած
«Եւ ընտրել է, և ուղարկել. որդիս վճռել է սրտանց։
«Մենք միշտ միմեանց չէինք ասում, թէ պէտք է նա ինքն ընտրէ,
«Եւ դու ինքդ չէիր ուզում, որ նա վառվռուն սէր ցոյց տայ
«Դէպի մի կոյս. ահա և ժամն այսօր հասել է արդէն.
«Այո՛, սիրուց զգացուել է և ընտրել է մարդու պէս.
«Այդ այն պանդուխտ աղջիկն է, որ պատահել է մեր որդուն.
«Ընտրի՛ նորան, թէ ոչ՝ երդուեց, որ ամուրի կըմնայ։

Որդին ասաց. «Տո՛ւր ինձ նորան. մաքուր սրտով ընտրեցի.
«Ձեմ սխալուել. նա կըլինի քեզ արժանի մի դուստր։
Հայրը լուռ էր. քահանան շուտ ոտքի ելաւ ու խօսեց.
«Ակընթարթն է վճռում մարդուս ամբողջ կեանքն ու ապագան.
«Որովհետև մարդու սրտում իւրաքանչիւր մի վճիռ,

«Որքան էլ որ խորհրդածուն, ծնունդ է մի վայրկեանի,
«Եւ իմաստուն մարդն է միայն ճշմարիտը որոշում։
«Վատանդաւոր է ընտրութեան մէջ երկար-բարակ մտածել
«Եւ զգացմունքն իզուր այդպէս ամեն կողմից պղտորել։
«Շատ մաքուր է մեր Հերմանը. մանկութիւնից, ես գիտեմ,
«Նա իւր ձեռքերն ամեն բանի միշտ չէր մեկնում անխտիր.
«Ինչ որ ցանկաց, պատշաճ էր միշտ և ամուր էր պահպանում։
«Մի՛ վրդովուէք, մի՛ զարմանաք, երբ տեսնում էք կատարուած
«Այն՝ ինչ որ դուք ուզում էիք. ճշարիտ, այդ նման չէ
«Այն իդէաներին, որ շարունակ ձեր սրտերում ունէիք,
«Որովհետև տենչանքները ծածկում են մեր ըղձալին։
«Ողորմութիւնն իջնում է ցած իւր խիստ պատկերով.
«Մի՛ մերժէք դուք այն աղջկան, որ առաջին անգամից
«Ձեր սիրելի, բարի, խելօք որդու սիրտն է դրաւել։
«Երնէ՛կ Նորան, որին խիստ ձեռք է տալիս սիրելին,
«Եւ քաղցրալիր տենչանքները լուռ չեն մտնում սրտի մէջ։
«Նորա դէմքից տեսնում եմ ես, որ իւր բախտը կարել է։
«Բուռն սէրը պատանուն էլ երիտասարդ է դարձնում.
«Հեշտ չէ՛ կրկին կասեցնել. եթէ Նորան արդելենք,
«Վախենում եմ Նորա կեանքը թունաւորուի թախիծով։

Յետոյ խիստն դեղագործը պատասխանեց լրջութեամբ,
Որի բերանում խօսքը վազուց պատրաստուել էր թռչելու.
«Այս անգամ էլ թոյլ տուէք, որ մինչին ուղին ձեզ ցոյց տամ.
«Օգոստոսի նշանաբանն էր. «Կամաց-կամաց շտապիր»։
«Պատրաստ եմ ես ուրախութեամբ ծառայելու դրացուն
«Եւ աննշան, չնչին խելքս գործադրելու իւր օգտին։
«Եւ մանաւանդ ջահէլներին առաջնորդել շատ է պէտք.
«Թողէք գընամ, այն աղջկան փրկել եմ ես ցանկանում.
«Հարցնեմ նոցա, որ տեղեակ են և ապրում են Նորա հետ.
«Մարդ չի կարող ինձ հեշտ խաբել. խօսքը կշռել գիտեմ ես։

Որդին խիստն վրայ բերաւ արագաթև [1] խօսքերով.
«Գնացէ՛ք, դրացի, տեղեկացէք, բայց կուզէի, որ նոյնպէս

[1] Հոմերոսի «ἔπεα πτερόεντα»։

«Պատուելի հայրն ընկերանաք, Ձեզ հետ լինէր միասին։
«Երկու մարդիկ՝ այդպէս ազնիւ հառաստ վկայ կըլինին։
«Իմացէ՛ք, հայր, այդ աղջիկը պատահական մէկը չէ.
«Նոյանից չէ, որ շրջելով արկածներ են որոնում
«Եւ շատ անփորձ պատանիներ խրճիթում են ցանցի մէջ։
«Ո՛չ. ընաջինջ պատերազմի զարհուրելի վիճակից,
«Որ ողջ աշխարհ քար-քանի՞ արաւ, մինչև հիմքը տապալեց
«Շատ հառաստուն ապարանքներ, այդ անբախտն էլ հալածուեց։
«Ազնուազարմ, պատուով մարդիկ չեն տառապում վշտերով.
«Իշխանները՝ ծպտեալ փախչում, թագաւորներն՝ աքսորւում։
«Ա՞խ, հէնց այդպէս ահա և նա, իւր քոյրերից ընտրելին
«Աքսորուել է ընկիկ երկրից. մոռանալով իւր ցաւերն,
«Ուրիշներին օգնում է նա՝ անօգնական նեցուկը։
«Անչափ են վիշտ ու կսկիծներն՝ այս աշխարհում բուն դրող։
«Արդեօք, մի օր այս չարքից չի՞ ծնուելու բարի բախտ,
«Եւ ես կրծքիս ամուր սեղմած հաւատարիմ ամուսնուս՝
«Ձեմ հրճուելու պատերազմով, ինչպէս որ դուք հրդեհով։

Հայրը դարձաւ դէպի որդին, սկսաւ այսպէս բարբառել.
«Որդեակ, լեղուդ ինչպէս բացուեց, որը այսքան ժամանակ
«Ցամրացել էր բերանիդ մէջ և հազիւ էր շարժըւում։
«Այսօր տարայ ես այն բոլորն, ինչ որ ամեն մի ծնող,
«Թէ ինչպէս է մայրը որդու անզուսպ կիրքը պաշտպանում
«Եւ թէ ինչպէս ամեն դրացի ջատագով է այդ մարին,
«Որ ընդդէմ է աղայի հօրն, իւր հարազատ ծնողին։
«Բայց չեմ ուզում ձեզ բոլորիդ հակառակել. ինչ օգուտ,
«Որովհետև յամառութիւն, արատաւոր եմ դուշակում։
«Գնացէ՛ք, քննէ՛ք և աղջկան Աստծու կամքով բերէք տուն.
«Իսկ եթէ ոչ, թո՛ղ որ Հերմանն այդ աղջկան մոռանայ։

Հայրը այսքան խօսեց միայն. որդին դուշեց ցնծագին.
«Մինչ երեկոյ Ձեզ կընծայեմ այն պատուական աղջկան,
«Որին միայն կրծքում ազնիւ սիրտ ունեցող մարդ կուզէ։
«Եւ յոյս ունեմ՝ բարի կոյսը շատ բախտաւոր պիտ լինի
«Եւ ինձանից շնորհակալ՝ հայր, մայր տալու փոխարէն,
«Ինչպէս խելօք մանուկներն են սրտանց ուզում ունենալ։

«Բայց չեմ ուզում էլ ուշանալ. գնամ, լծեմ մեր ձիերն,
«Իսկոյն տանեմ գրացիներիս իմ սիրելու յետևից:
«Կը հանդանդեմ ես այդ մարդկանց, իրենց խելօք մտքերին.
«Երդւում եմ, որ միշտ կը շարժուեմ նոցա վճռի համաձայն.
«Ես աղջկան էլ չեմ տեսնի, մինչև իմը չլինի:
Նա դուրս թռաւ. իսկ միւսներն այդ միջոցին միմեանց հետ
Այս կարևոր գործի մասին ըսկսեցին խօսակցել:
Հերմանն իսկոյն ոտքոտ մըտաւ, ուր կրակոտ նժոյգներ՝
Հանդարտ կանգնած մաքուր վարսակ էին ուտում շտապով,
Նոյնպէս չոր խոտ, որ հնձուած էր ամենալաւ արօտից:
Փայլուն սանձերն արագ-արագ դրեց նոցա բերաններն,
Արծաթագօծ ճարմանդներից անցկացրեց փոկերը[1],
Երկայն ու լայն երասաններն ամրացրեց շտապով
Եւ ձիերը բակը քաշեց, ուր որ մշակն առաջուց
Դիւրին կերպով դուրս էր քաշել քեղուց բռնած նոր կառքը:
Այնուհետև ճարտարութեամբ փափուկ, ազնիւ փոկերով
Արագասոյր նժոյգներին պինդ կապեցին լծակից:
Հերմանն առաւ մտրակն իսկոյն, դուրս սլացաւ դարպասից:
Հէնց որ երկու բարեկամներն հանգիստ նստան տեղներում,
Արագութեամբ սլացաւ կառքն, իւր յետևից թողնելով
Սալայատակն ու քաղաքը, աշտարակներն ու պատերն:
Սլանում էր Հերմանն այդպէս դէպի ծանօթ խրճուղին
Եւ նա երբէք դարուփոսին ուշադրութիւն չէր դարձնում.
Սակայն երբ որ յաջորդ գիւղի աշտարակը նկատեց
Եւ մօտիկից՝ պարտէզներով շրջապատուած շինուածքներ,
Նա մտածեց, որ ձիերին պէտք է մի քիչ հանգիստ տալ:

Արմատները երկրի խորքում, ստուերի մէջ բարձրացած՝
Հնադարեան լոքներով ու սէզերով ծածկուած՝
Այդ գիւղի մօտ լայն ու կանաչ մի արօտ էր դանւում,
Զբօսավայր՝ շրջակայքի քաղաքացոց, գիւղացոց:

---

[1] Համեմատել Իլիական V, 721—731, ուր նկարագրուած է, թէ ինչպէս Հերան լծում է նժոյգներն այն միջոցին, երբ Հեբեն կառքն պատրաստում:

Ծառերի տակ ծանծաղ փորուած մի աղբիւր էր դանւում.
Թէ մարդ իջնէր սանդուղքներով, քարէ թմբեր կըտեսնէր
Այդ աղբիւրի շուրջը դարսած, որ հոսում էր մշտաբուղխ.
Շուրջը կային ցածր պատեր՝ ջուր քաշելու շատ յարմար:
Հերմանն իսկոյն վճռեց մըտքում, որ իւր յոգնած ձիերին
Ստուերի տակ կանգնեցնէ. այդպէս արաւ և ասաց.

«Բարեկամնե՛ր, դէհ, իջէք ցած և գընացէք քննելու,
«Թէ այն աղջիկն արժանի է, որ իմ ձեռքը տամ նորան,
«Թէև գիտեմ, վերադարձին ո՛չ մի նոր բան չէք ասի:
«Թէ լինէի ես ինքնակամ, կը գնայի շուտով գիւղ
«Եւ կարճ խօսքով բարի աղջիկն իմ բախտն իսկոյն կորոշէր:
«Կարող էք դուք միւսներից իսկոյն նորան տարբերել,
«Որովհետև նորա նմանն հազիւ լինի աշխարհում:
«Բայց ես կասեմ նշանները նորա մաքուր շորերի.
«Բարձր կուրծքը վեր է պահում իւր կրծկալը կարմրագոյն,
«Որ պնդուած է երիզներով. տակից կորսէտ է հագել.
«Շապկի եզերքն հաւաքել է իւր խորշաւոր օձիքով,
«Որ պատում է սիրուն կերպով նրա կզակը բոլորակ.
«Իսկ ձուաձև իւր գլուխը նորան սիրուն է դարձնում:
«Նորա վարսերն ոլորում են գնդասեղներն արծաթի,
«Իսկ կրծկալից վայր է իջնում մի բազմածալ շրջազգեստ,
«Որ ճեմելիս՝ իւր գեղեցիկ սրունքներին է ծեծւում:
«Բայց ես կուզեմ այս էլ ասել և յատկապէս թախանձել,
«Որ չխօսէք աղջկայ հետ և ձեր միտքը չպարզէք:
«Հարցրէք այլոց և ամեն բան, ինչ որ պատմեն, լաւ լսէք.
«Երբ ունենաք այնչափ լուրեր, որ դոհ մընան ծնողներս,
«Եկէք լինձ մօտ մտածելու, թէ ինչ պէտք է մենք անենք:
«Ճանապարհին ձեզ հետ գալիս այսպէս անցաւ իմ մտքով:
Այսքանն ասաց. ընկերները ճամբայ ընկան դէպի գիւղ,
Ուր տուն, պարտէզ, շտեմարան ծածկուել էին մարդկանցով.
Լայն փողոցում անթիւ կառքեր կանգնել էին շար ի շար.
Իսկ բառաչող կով ու ձիան պաշար էին բաժանում:
Ցանկի վրայ սիրում էին կանայք լուացքի զգեստներ,
Իսկ մանուկներն առուի վրայ խաղում էին ջրի հետ:

Այդպէս երկու լրտեսները զննում էին աջ ու ձախ,
Խումբ-խումբ մարդկանց ու կենդանեաց բազմութիւնը ճեղքելով,
Թէ երբ, արդեօք, պէտքէ տեսնեն նկարագրած աղջկան.
Սակայն ոչ ոք չէր նմանում գեղեցկատես աղջկան:
Բազմութիւնը քանի գնում, խտանում էր. և մարդիկ
Կռւում էին կառքերի մօտ, ճչում էին խեղճ կանայք:
Պատկառելի քայլուածքով մօտ էր գալիս մի ծերուկ.
Նա մօտեցաւ կռուողներին, ազմուկն խկոյն դադարեց,
Երբ որ լռել հրամայեց, հօր խոտութեամբ սպառնաց:
Նա ձայն տուաւ. «Մի՞թէ դեռ մեղ կարիքները չեն զսպել,
«Որ վերջապէս կարողանանք համբերատար, հաշտ ապրել,
«Եթէ նոյնիսկ մենք չիմանանք արածների հաշիւ տալ:
«Ճշմարիտ որ երջանիկը շատ անհաշտ է. բայց մի՞թէ
«Զարիքներից չէք սովրելու, թէ եղբօր հետ չե՛ն կռուի.
«Զիջէ՛ք միմեանց օտար երկրում, ինչ որ ունէք՝ բաժնեցէ՛ք,
«Որպէսզի դուք կարողանաք ողորմութիւն ստանալ:
Այսպէս ասաց. բոլոր մարդիկ լուռ մնացին ու խաղաղ,
Անասուններն ու ոչխարը կարգի բերին անվրդով:
Երբ քահանան ուշիմ լսեց այդ ծերունու ասածներն
Եւ անծանօթ դատաւորի բարի խորհուրդն հասկացաւ,
Նա մօտեցաւ, այսպէս խօսեց՝ իմաստալի խօսքերով.
«Ցիրաւի՛, հայր, երբ ժողովուրդն ապրում է լաւ օրերում՝
«Օգտուելով պարարտ հողից, որ բանում է միշ իւր ծոցն
«Ու ցանկացած պտուղները նորոգում է ամէ ամ,—
«Ամեն մի մարդ ինքնակամ է, իրեն խելօք է կարծում
«Եւ իմաստուն. այդպէս ահա նրանք ապրում են միատեղ.
«Խելօք մարդն էլ համարում է, ինչպէս մէկը ամբոխից,
«Որովհետև ամեն մի դէպք խաղաղութեամբ է անցնում:
«Երբ կարիքը փոփոխում է մեր ընթացքը բնական,
«Շինուածքները տապալում է, դաշտ ու պարտէզ աւերում,
«Մարդ ու կնոջ դուրս է խլում տան անվրդով պատերից
«Եւ թափառմամբ շրջել տալիս տագնապալից օր, գիշեր:
«Աւա՜ղ, միայն այդ ժամին է մարդ որոնում խելօքին,
«Եւ որն իզուր չի քարոզում իւր մաքերը հանճարեղ:

«Ասացէ՛ք, հայր, Դուք անկասկած փախստական այս մարդկանց
«Դատաւորն էք, որ այդպէս շուտ անդորրացրիք բոլորին.
«Այո՛, այսօր նրման էք Դուք այն նախնական հայրերին,
«Որ մոլորուած ժողովրդին փրկում էին կորստից:
«Թւում է ինձ, թէ Մովսէսի, Յեսուայ հետ եմ ես խօսում:
Լուրջ հայեացքով՝ դատաւորը քահանային այս ասաց.
«Իրաւ, ներկան նման է այն սակաւաթիւ օրերին,
«Որ գրանում ենք սուրբ գրքի մէջ կամ ընդհանուր պատմութեան:
«Ով որ ապրեց երէկ, այսօր, շատ տարիներ անցրեց նա:
«Բոլոր դէպքերն այսպէս արագ յաջորդում են մէկմէկու:
«Երբ յիշում եմ մօտիկ անցեալն, ինձ թւում է, թէ դլխիս
«Ծանրանում է ծերութիւնը. բայց դեռ թարմ են իմ ուժերը:
«Օ՜, համարձակ մեր անձերը նոցա հետ ենք բաղդատում,
«Որոնց Աստուած ծանր ժամին մորենու մէջ յայտնուեց.
«Եւ մեղ նոյնպէս՝ ամպերի մէջ ու բոցավառ կրակի:
Մինչ քահանան մտադիր էր շարունակել զրոյցը,
Որ իշխանի և իւր մարդկանց դրութեան մասին իմանայ,
Նրան ականջում իւր ընկերը այսպէս ասաց կամացուկ.
«Խօսքը դարձրո՛ւ աղջկայ մասին՝ իշխանի հետ խօսելիս:
«Ես գընում եմ որոնելու. յետ կրդառնամ, երբ գրանեմ:
Եւ քահանան համաձայնեց. իսկ լրտեսը շրջում էր,
Պարտէզների, ամբարների, թփերի մէջ որոնում:

Զ. ԿԼԻՕ[1]

Դար[2].

Երբ որ պանդուխտ դատաւորին առաջարկեց քահանան,
Որ նա պատմէ իւր համայնքի դիպուածներն ու գրկանքները,
Այն ժամանակ այդ մարդն ասաց. «Մեր վշտերը սակաւ չեն.
«Ժամանակի դառնութիւնը ճաշակեցինք բոլորով.
«Անհաւելի էր, երբ որ կորան մեր դեղեցիկ, վառ յոյսերն.
«Ո՞վ կուրանայ, որ միշտ իւր սիրտն աղատասէր կրծքի մէջ
«Բաբախում էր ամբիծ արեան մաքուր, առողջ զարկերով,
«Երբ բարձրացան նոր արևի ճառագայթները լուսավառ,
«Երբ ընդհանուր երաւունքի մասին էինք մենք լսում,
«Ոգևորիչ աղատութեան և հաւասար լինելու:
«Այն ժամանակ ամեն մի մարդ կեանք վարելու յոյս ունէր
«Եւ կարծում էր, թէ խորտակուեց շատ երկիրներ կաշկանդող,
«Պարապութիւն և շահասէր ձգտում բերող դռա շղթան:
«Եւ անձկալից այդ օրերում մարդկութիւնը չէր նայում
«Դէպի վաղուց յայտնի անուն և մեծ պատիւ վայելող,
«Այժմ աւելի հռչակաւոր մայրաքաղաքն աշխարհի:
«Եւ այդ մարդիկ, որ առաջուց մեծ պատգամներ մեզ տուին,
«Զուլնիֆ, արդեօք, անմահ անուն՝ մինչև երկինք բարձրացող.
«Ամեն մէկի արիութիւնն ու հանճարը չէր աճում:
«Նախ մենք, երբև դրացիներ, ոգի առանք նոցանով.
«Ցեռոյ հասաւ ժամը կռուի. ֆրանսիացիք զինուելով՝
«Արշաւեցին. թւում էր մեզ, թէ բերում են հաշտութիւն.

1 Պատմութեան մուսան:

2 Այս երգով հեղինակը ծանօթացնում է մեզ Ֆրանսիական յեղափոխութեան շրջանի ազատամիտ գաղափարներին, երբ տեղի է ունեցել այս անցքը:

«Եւ յերաւել, այդ էլ բերին. նոքա հոգով վեհ էին.
«Նրանք տնկեցին ազատութեան գեղաճիճաղ նոր ծառը[1],
«Ամեն մէկին իւրը տալով և ինքնակամ թողնելով:
«Այն ժամանակ ծեր ու մանուկ լցուել էին բերկրութեամբ,
«Ուրախ պարը բոլորելով նոր դրօշի չորս բոլոր:
«Այսպէս ահա գերազանցող ֆրանսիացիք գրաւեցին
«Վառ աշխոյժով ամենից շուտ տղամարդկանց խելք ու միտքն,
«Ցեռոյ կանանց անդօր սրտերն՝ լրենց բուռն թովչութեամբ:
«Բազմապահանջ պատերազմի բեռը փոքր էր մեզ թւում,
«Որովհետև մի յոյս հեռուում սաւառնում էր մեր առաջ,
«Գրաւում էր մեր հայեացքը նոր բաց արած շաւիղով:
«Ո՜հ, ինչ քաղցր է այն ժամանակ, երբ որ վեհան հարսի հետ
«Ուրախ պարով օրօրւում է, սպասելով միութեան:
«Բայց աւելի փառաւոր էր, երբ բարձրագոյնն ամենից
«Մօտ էր թւում, որի մասին մարդ կարող էր երազել:
«Ամեն մարդու լեզուն բաց էր. խօսում էին ծեր մարդիկ
«Պատանու հետ՝ բարձր ձայնով լի զգացմամբ, խոհերով:
«Բայց երկինքը շուտ մթնեցաւ. բարի գործի անարժան,
«Մի փուչ սերունդ աղմուկ հանեց իշխանական շահերով:
«Խողխողեցին նոքա միմեանց, նոր դրացուն, եղբօրը՝
«Կեղեքելով և ամեն կողմ շահասէր խումբ սկսելով.
«Մեր մեծերը շուայլ ու զեղխ կեանք վարեցին, ճնշեցին,
«Կողոպտելով և ծախսելով նոյնիսկ ամեն չնչին բան:
«Մարդկանց միակ հոգն էր միայն, որ վաղուանն էլ քիչ մընայ:
«Անչափ էին մեր կարիքները, իսկ ճնշումը՝ յարաճուն.
«Եւ մեր ձայնը լսող չկար, նոքա օրուայ տէրն էին.
«Կատաղութիւնն ու կսկիծը խաղաղ սրտում բուն դրին.
«Ամեն մէկը մտածում էր ու երդւում էր՝ վրէժ հանել
«Թշնամանքի, խաբուած յոյսի, դառն կորստի փոխարէն:
«Ֆրանսիացիք արագութեամբ նահանջեցին դէպի յետ.

1 Ակնարկում է ժապաւէններով զարդարուած ձողերը, որոնց վրայ ցցուած էին ժամօրհնիների կարմիր գլխարկները, որ ազատութեան նշան էին:

«Ա՜խ, այդ ժամին մենք զգացինք կռուի վիճակն ահռելի.
«Յաղթողն է վեհ, մեծահոգի. գոնէ այդպէս է թուում.
«Ինայում է յաղթուած մարդուն, կարծես իւրը լինի նա,
«Եթէ իրեն օգուտ կրտայ, կրծառայէ իւր կայքով:
«Փախչողն օրէնք չի ճանաչում. միայն մահը հոգալով,
«Ոչ մի բարիք չի խնայում, փչացնում է շտապով.
«Վրդովուած է նորա հոգին, և յուսահատ իւր վիճակն
«Արտադրում է նորա սրտից կոստաբեր ոճիրներ.
«Նորա համար սուրբ բան չկայ. կողոպտում է ամեն բան,
«Յարձակւում է անզուսպ կերպով կանանց վերայ՝ լրբօրէն.
«Ամենուրեք մահ է տեսնում, վերջին ժամում հրճւում է
«Դաժան կերպով կարմիր արեամբ և ցնծում է հծծիւնով.
«Մի կատաղի զայրոյթ ծնաւ մեր քաջ մարդկանց սրտերում՝
«Այդ կոստաղ վրէժն առնելու, մնացորդը պահելու:
«Բոլորն իսկոյն զէնքեր առան, երբ որ տեսան թշնամուն,
«Նկատեցին գունատ դէմքեր ու մոլորուած հայեացքներ:
«Եւ ազդարար զանգակների ձայնը հնչեց անընդհատ.
«Մօտիկ փորձանքն էլ չդադարեց այդ զայրոյթը կատաղի.
«Շինականի խաղաղ գործիքն յանկարծ փոխուեց սուր զէնքի.
«Այն ժամանակ արիւն ծորաց եղանների, դերանդուց.
«Անգթօրէն և անխնայ տապալւում էր թշնամին,
«Զօրանում էր ամեն կողմ ոյժ ու վախկոտ, նենգ թուլութիւն:
«Երանի՜ թէ ուրիշ անգամ ես ո՛չ մի մարդ չտեսնեմ
«Այսպէս անարդ մոլութեան մէջ. դեռ գազանը շա՛տ լաւ է.
«Թող չկանչէ՛ ապատութիւն, երբ որ վայրուել չգիտէր:
«Արդեւքները վերանալիս՝ գործում է մարդ ամեն բան,
«Ամեն չարիք, որ օրէնքն էր խեղդել նորա սրտի մէջ:
«Ո՛վ ազնիւ մարդ, դատաւորին շեշտով ասաց քահանան.
«Որ Դուք մարդկանց չէք ճանաչում, չեմ մեղադրի երբէք Ձեզ.
«Շատ չարիքներ կրեցիք Դուք խառնաշփոթ գործերից:
«Եթէ զննէք անցեալ օրերն յետահայեաց աչքերով,
«Պէտք է անշուշտ խոստովանէք յաճախ տեսած բարիքներ,
«Ազնիւ բաներ, որ պահուած են ու կան մարդկանց սրտերում,
«Երբ որ վտանգ չի սպառնում և երբ չարիք չի նեղում,

«Որ մարդ իրեն ցոյց տայ իբրև խնամող Աստուած, հրեշտակ:
Նորան այսպէս պատասխանեց դատաւորը՝ ժպտալով,
«Խելօքութեամբ միտս էք բերում, ինչպէս վհատ տանտիրոջ
«Ցիշեցնում են կրակից յետոյ, թէ իւր ոսկին կրգտնէ,
«Որ հալուել են անիւնի մէջ և տարածուել ամեն կողմ.
«Ճշմարիտ որ չնչին է այդ, բայց այդ քիչն էլ շատ արժէ.
«Եւ տընանկը փորփրում է, իւր գրտածի վրայ ուրախ:
«Ահա նոյնպէս ուրախութեամբ ես այն գործերն եմ յիշում,
«Որ թէև քիչ, բայց բարի են, որ պահուած են իմ մտքում.
«Զե՛մ ուրանում, այո՛, տեսայ, թշնամիներն հաշտուեցան,
«Որ քաղաքը չվտանգուի. և վառ սէրը ես տեսայ
«Ծնողների, բարեկամաց, մանուկների քաջութիւն.
«Առնանում էր քաջ պատանին, ոյժ էր առնում ծերունին,
«Ցոյց էր տալիս նաև մանուկն իրեն ինչպէս պատանի:
«Այո՛, նոյնիսկ մեր թոյլ սեռը՝ ինչպէս սովոր են ասել,
«Երևում էր որտով անվախ, մարմնով ուժեղ, հոգով ժիր:
«Թոյլ սուէք ինձ այս բոլորից մի բարի գործ յիշեմ ես,
«Որ կատարեց մի ազնիւ կոյս, վեհանձն հոգով մի աղջիկ,
«Մեծ բակի մէջ՝ ընկերներով մենակ եղած ժամանակ.
«Այդ մինչոցին տղամարդիկ կռուի էին գնացել:
«Յանկարծ այնտեղ մի խումբ փախչող սինլբոներ ներս մտան,
«Կողոպտեցին, կանանցով լի տեսնելի մէջ թափուեցան.
«Նոքա տեսան պատկերն անմեղ, վայելչակազմ օրիորդի
«Եւ դէմքերը սիրունատես ու դեռ մատաղ աղջկանց:
«Յանկութիւնը բռնեց նոցա և անզգայ նետուեցան
«Դողդոջացող խմբի վերայ ու վեհանձն օրիորդի,
«Որ նոցանից մէկի կողքից խլեց իսկոյն նորա սուրն,
«Ուժգին դարկեց, արնաշաղախ ոտքերի մօտ գլորեց
«Եւ առնական հարուածներով աղջիկներին ազատեց,
«Կրկին չորսին խոցոտելով, ոտկայն սոքա փրկուեցան.
«Ցետոյ վակեց բակի դռնակն՝ սպասելով օգնութեան:
Օրիորդի գովասանքը երբ որ լսեց քահանան,
Բարեկամի համար իսկոյն նորա սրտում յոյս ծագեց
Եւ քիչ մընաց, որ հարցնէր, թէ ի՞նչ եղաւ, արդեօք, նա,

Նա էլ այժմ մասնակից է ժողովրդի հէգ անցքին:
Բայց դեղագործն այդ մինչոցին շտապ-շտապ մօտեցաւ,
Քահանայի թևից քաշեց ու մրմնջաց ականջում.
«Հարիւրաւոր կանանց միջից նկարագրի համաձայն
«Գտայ Նորան ես վերջապէս. եկէ՛ք, տեսէ՛ք Ձեր աչքով.
«Ձեզ հետ բերէք դատաւորին, մնացածն էլ իմանանք:
Նոքա դարձան. դատաւորին ճամբի վրայ իւր մարդիկ
Ցետ կանչեցին, որովհետև կարօտ էին խորհրդի:
Իսկ քահանան շարունակեց դեղագործին հետևել.
Եկան ցանկի բացուածքի մօտ. դեղագործը ցոյց տուեց.
«Տեսնում էք դուք այն աղջկան, որ մանկանն է փաթաթում-
«Ճանաչում եմ այն զգեստը, քարձի երեսն երկնագոյն.
«Այդ բոլորն էլ իւր կապոցով այսօր Հերմանն է բերել.
«Ճիշտ որ աղջիկն ընծաները շուտ և լաւ է բաժանել:
«Այդ բոլորը պարզ նշան են. միւսներն էլ պակաս չեն.
«Բարձը կուրծքը վեր է պահում իւր կրծկալը կարմրագոյն[1],
«Որ պնդած է երկներով. տակից կորսէտ է հագել.
«Շապկի եզերքն հաւաքել է իւր խորշաւոր օձիքով,
«Որ պատում է սիրուն կերպով նրա կզակը բոլորակ,
«Իսկ ձուաձև իւր գլուխը Նորան սիրուն է դարձնում:
«Նորա վարսերն ոլորում են գնդատեղներն արծաթէ:
«Նատած է նա, բայց տեսնում ենք վայելչակազմ իւր հասակն
«Ու կապտագոյն շրջազգեստը, որը կրծկից՝ բազմածալ
«Մինչև Նորա նուրբը, բարեձև որունքներն է ցած իջնում:
«Նա է անշո՛ւշտ, ուստի եկէ՛ք՝ գնանք այնտեղ ու տեսնեքն,
«Թէ նա զգաստ, բարի, խելօք մի աղջիկ է անարատ:

Տէր հայրն ասաց, մի հայեացքով նոտոր կոյսին գննելով.
«Ձե՛մ զարմանում, որ նա այդպէս գրաւել է պատանուն.
«Նորա դէմքին փորձուած մարդն էլ պակասութիւն չի գտնի:
«Երնէ՛կ Նորան, որին տուեց ընութիւնը մի պատկեր.
«Ամենուրեք նա տեղ ունի և անտերունչ չի մնայ.
«Նորան սիրով կըմօտենան, մէկտեղ լինել կըցանկան,

[1] Բառացի նկարագրում է Դորոթէային Հերմանի խօսքերով:

«Երբ որ դէմքին հեզահամբոյր Նորա վարքն է պատշաճում:
«Ճշմարիտն եմ ասում ես Ձեզ, ահա գտանք մի աղջիկ,
«Որ պատանուն ամբողջ կեանքում պէտք է հրճուանք պատճառէ
«Եւ կանացի իւր ուժերով լինի անկեղծ աջակից:
«Այդպէս չքնաղ մարմնին անշուշտ տէր է ազնիւ մի հոգու,
«Իսկ կորովի ջահելութեան երջանիկ է ծերութիւն:

Այնուհետև դեղագործը պատասխանեց ծանրախոհ.
«Դէմքը յաճախ խաբուսիկ է. չե՛մ հաւատում արտաքնին.
«Ճշմարտութիւնն այս առածի տեսել եմ ես շատ անգամ.
«Թէ դու չուտես մի լիդր աղ նոր ճանաչած մարդու հետ,
«Դու մի՛ Նորան վստահացիր. ժամանակին կիմանաս՝
«Տեսակն է, արդեօք ձեր սէրն ու յարմա՞ր էք դուք միմեանց:
«Ուստի թողէք տեղեկանանք մի քանի լաւ մարդկանցից,
«Որ աղջկան ճանաչում են և կըպատմեն իւր մասին:

«Յարգում եմ ես զգուշութիւնն, ասաց Նորան քահանան.
«Մեզ համար չենք աղջիկ ուզում, այլ ուրիշի. հեշտ բան չէ:

Ցետոյ Նոքա բարի, խելօք դատաւորի դէմ ելան,
Որ գալիս էր ճանապարհով, իւր գործերով զբաղուած.
Խելօք հայրը դիմեց Նորան զգուշութեամբ և ասաց.
«Մենք մի աղջիկ նկատեցինք այստեղ. մօտիկ պարտիզում,
«Խնձորենու տակին նստած, մանկան շորերն էր կարում
«Հին բամբակեայ կտորներից, որ նուէր է ստացել.
«Նա իւր դէմքով մեզ դուր եկաւ. շատ պարկեշտն է երևում.
«Ցայտնեցէ՛ք մեզ, ինչ որ գիտէք, լաւ մտքով ենք հարցնում:

Դատաւորը շուտ մօտեցաւ, նայեց առաջ և ասաց.
«Նորա մասին արդէն գիտէք. ինչ որ ես Ձեզ պատմեցի
«Այն փառաւոր գործի մասին, այս աղջիկն է կատարել,
«Որ սուրն առած պաշտպան դարձաւ ընկերներին և իրեն.
«Հէնց ինքն է նա. տեսնում էք որ ծնունդ է նա կորովի,
«Նոյնքան բարի, որքան կարիճ. նա շարունակ խնամեց
«Իւր ծերունի ազգականին, մինչ իջաւ սա գերեզման՝
«Իւր քաղաքի կարիքներից և գոյքերի կորստից.
«Եւ անարատունջ տարաւ նոյնպէս նա մի ուրիշ դառն վիշտ՝
«Նշանածի մահուան հետը, մի շատ ազնիւ պատանու՝

«Վեհ մաքերի նոր կայծերով. անձամբ Պարիզ գնաց նա՝
«Աղատութեան կռուի համար, և սոսկալի մահ գրտաւ.
«Որովհետև տանն և այնտեղ բռնութեան դէմ կռուեցաւ:
Այսքանն ասաց, իսկ երկուսը շնորհակալ լինելով՝
Գնում էին, բայց քահանան հանեց իսկոյն մի ոսկի,
(Իւր քսակի արծաթն առատ բաժանել էր քիչ առաջ,
երբ տեսել էր վախստական Թշուառ խմբերն անցնելիս)
Եւ նա պարզեց դատաւորին, յետոյ ասաց. «Այս լուման
«Բաժանեցէք չքաւորներին, իսկ աւելին Աստուած տայ:
Դատաւորը մերժեց, ասաց. «Մենք շատ փող ենք ազատել.
«Շատ զգեստներ ունենք նոյնպէս և զանազան իրեղէն.
«Եւ յոյս ունեմ, թէ կրդառնանք, դեռ բոլորը չսպառած:
Տէր հայրն ասաց, ոսկի փողը նորա ձեռքում սեղմելով.
«Այժմ ոչ ոք նպաստ տալու չդանդաղի թող երբէք:
«Եւ թող ոչ ոք չմերժէ այն, ինչ որ տալիս են սրտանց.
«Մարդ չգիտէ, ինչ որ ունես, մինչև երբ քեզ կըմնայ,
«Կամ մինչև երբ օտար երկրում պէտքէ շրջես, թափառես,
«Զուրկ՝ արտերից, այգիներից, ապրում էիր որոնցով:
«Է՜հ, դեղագործն այնուհետև ասաց Նորան բաղմահոգ.
«Թէ փող լինէր իմ գրպանում, պէտքէ անշուշտ տայի Ձեզ,
«Թէ շատ, թէ քիչ, որովհետև ձերոնք կարիք շատ ունեն:
«Բայց անպարգև չեմ թողնի Ձեզ, որ իմ սրտին իմանաք,
«Որքան էլ որ ցանկացածից նուազ լինի իմ նուէրը:
Այսպէս ասաց, ասեղնագործ կաշուէ քսակն հանեց դուրս՝
Լարից բռնած, ուր պահուած էր լաւ տեսակի ծխախոտ.
Եւ բաց արաւ. այնտեղ կային մի քանի հատ ծխամորջ.
«Ընչին է այս», տուողն ասաց. գիւղապետը վրայ բերաւ.
«Լաւ ծխախոտն ուղևորին ինարկէ միշտ դիւր կրդայ:
Եւ դեղագործն այնուհետև ծխախոտը լաւ գովեց:
Բայց քահանան քաշեց Նորան ու երկուսով հեռացան.
«Դէ՜հ, շո՛ւտ, ասաց խելօք մարդը. սպասում է պատանին.
«Եւ թող որքան կարելի է, ուրախ լուրը շուտ լսէ:
Նոքա եկան, Նորան գտան կառքին թիկնած, լորու տակ.
Ծժոյգները դոփում էին կանաչազարդ դետինը.

Բռնել էր նա նոցա սանձած և կանգնել էր մտածկոտ
Ու նայում էր դէպի առաջ. ընկերներին չտեսաւ,
Մինչև եկան ու կանչեցին, ուրախ նշան ցոյց տալով:
Դեղագործը հեռուից արդէն սկսեց խօսել անհամբեր.
Սակայն նոքա մօտիկ եկան. շուտով Նորան ընդմիջեց
Պատուելի հայրն ու Հերմանի ձեռքից բռնեց և ասաց.
«Դէ՜հ, աչքդ լոյս, լաւ ես ընտրել՝ ուղիղ աչքով ու սրտով.
«Երանի՛ քեզ, մատաղ կեանքիդ ընկերակից քո կնո՛ջ[1]:
«Արժան է քեզ. ուստի արի կառքդ դարձրու, որ գնանք,
«Արագութեամբ թռչենք, հասնենք մինչև ծայրն այդ գիւղի,
«Այդ աղջկայ ձեռքը խնդրենք և շտապով տանենք տուն:
Բայց պատանին անշարժ կանգնած՝ չունէր նշան խնդութեան
Ու լսում էր այդ երկնային և սիրուհի խօսքերը.
Խոր ախ քաշեց, ապա խօսեց. «Շտապելով մենք եկանք,
«Ամօթահար և դանդաղկոտ գուցէ դառնանք դէպի տուն.
«Սպասելուց լի վեր այստեղ տանջում էին ինձ հոգսեր,
«Կասկած, շփոթ, սիրող սրտին ցաւ պատճառող ամեն բան:
«Կարծում էք դուք, որ հարուստ ենք, իսկ նա աղքատ և պանդուխտ,
«Պէտքէ ուրեմն համաձայնի՞ մեզ հետևել, թէ գնանք.
«Բայց տարապարտ խեղճութիւնը մարդուն հպարտ է դարձնում.
«Սակաւապէտ, ժիր է աղջիկն ու նորանն է ողջ աշխարհ.
«Կարծում էք դուք այդպէս սիրուն, առաքինի մի աղջիկ
«Երբևիցէ չի՞ գրաւել մի բարեսիրտ պատանու,
«Մինչև այժմ փնտրել է պահել նա իւր սիրտը սիրոյ դէմ:
«Մի՛ շտապէք շուտով այնտեղ, չլինի՛ թէ ամօթով
«Կրկին ձիերն յետ դարձընենք, վախենում եմ՝ այդ սրտին
«Մի պատանի տէր է դարձել, և իւր ձեռքը նա տալով
«Խոստացել է հաւատարիմ ու երջանիկ միութիւն:
«Ահա, ես կանգնեմ նորա առաջ ամօթահար, գլխակոր:
«Երբ քահանան ուզում էր, որ խեղճ պատանուն սիրուհի,
Իւր շատախօս ընկերն իսկոյն այս ասելով մէջ ընկաւ.
«Ինարկէ որ հին ժամանակ այսքան դժուար չէր լինի.

---

1 Հոմերոսի «Κουριδίη ἄλοχος»։

«Այն ժամանակ ամեն մի գործ ունէր յատուկ եղանակ։
«Ծնողները որդու համար թէ ուզէին հարս բերել,
«Կանչում էին մտերմաբար նախ և առաջ տանու մարդ,
«Իբր հարսնախօս՝ հարսնացուն հօր ու մօր մօտ ուղարկում։
Մի կիւրակի նա հագնելով հանդիսական զգեստները,
«Իւր պատուարժան քաղաքացուն այցելում էր ճաշից ետ.
«Խօսում էր նա մտերմօրէն նախ ընդհանուր հարցերով,
«Խօսքի նիւթը ճարտար կերպով այս կողմ, այն կողմ դարձնելով.
«Եւ վերջապէս գովում էր նա երկար, բարակ խօսքից ետ՝
«Եւ աղջկան, և այն մարդուն, որը նորան ճամբել էր.
«Խելօք մարդիկ նորա մտքինն հասկանում ՝լին. հարսնախօսն
«Իմանալով նոցա կամքը, իւր ցանկութիւնն էր պարզում.
«Առաջարկը եթէ մերժուէր, այնքան ծանր չէր լինի.
«Թէ յաջողուէր, այնուհետև հարսնախօսը շարունակ
«Ընտանեկան հանդէսներում առաջին տեղն էր բռնում,
«Որովհետև ամբողջ կեանքում յիշում էին մարդ ու կին,
«Թէ այդ ճարտար ձեռնքն է հիւսել ոկզբնական հանգոյցը։
«Բայց այժմ այս հնացել է ուրիշ բարի և աղնիւ
«Բարքերի հետ. իւրաքանչիւրն ինքն է ընտրում իւր համար.
«Թող մերժումն էլ նա ընդունէ՝ իրեն համար պատրաստուած,
«Աղջկայ մօտ ամօթահար և գլխակոր նա կանգնէ։

«Ինչ որ կուզէ, թողէք լինի, վրայ բերաւ պատանին,
Որ հաղիւ էր խօսքը լսել ու վճռել էր լռութեամբ.
«Անձամբ կերթամ և իմ բախտը՝ այն աղջկայ բերանից
«Ե՛ս կլսեմ, որի վերայ մեծ համարմունք ես ունեմ,
«Աւելի՛ շատ, քան թէ մարդը կնոջ մասին կունենայ։
«Ինչ որ ասէ, լաւ կլինի ու շատ խելօք, այդ գիտեմ.
«Եթէ նոյնիսկ վերջին անգամ լինիմ նորան տեսնելու,
«Կրկին կուզեմ սև աչերի վառ հայեացքին պատահել.
«Թէ չսեղմեմ նորան սրտիս, կուզեմ տեսնել նորա կուրծքն
«Եւ այն ուսերն, որ բաղուկներս ուզում էին պինդ գրկել.
«Այն բերանը կուզեմ տեսնել, որի համբույրն ու «այո»
«Ինձ անանց բախտ կըպատճառեն, իսկ մէկ «ոչը» դաժան մահ։
«Բայց ինձ այստեղ մենակ թողէք. դուք չպատէք դուք էլ ինձ.

«Դարձէ՛ք հօրը ու մօրը մօտ. և թող նոքա իմանան՝
«Իրենց որդին չի՛ սխալուել, լաւ է աղջիկն, արժանի։
«Դէ՛հ, ուրեմն ինձ մենակ թողէք. հէնց այդ բլրի շաւիղով,
«Որ տանձենու մօտով անցնում, այդուց ներքև է ինչնում,
«Ես շատ շուտով տուն կըդառնամ։ Օ՜, սիրելուս թէ ուրախ
«Եւ հապճեպով տուն բերէի. գուցէ շաւղով դէպի տուն
«Մենակ դառնամ և էլ չանցնեմ ուրախ որտով այնտեղից։
Այսպէս ասաց ու սանձերը քահանային նա տուաւ,
Որ փրփրոտերախ նժոյգները մեծ հմտութեամբ դսպելով,
Ցատկեց խոկոյն կառքի վերայ՝ կառապանի տեղն առաւ։

«Սակայն դու դեռ դանդաղում ես, ո՛վ իմ զգոյշ բարեկամ.
«Դու ասացիր, կըվստահիս ինձ քո հոգին, միտքն ու սիրտ,
«Բայց քո մարմինն ու ոսկորներն ապահով չես համարում,
«Երբ հոգևոր ձեռքն է բռնել աշխարհային սանձերից։

Սակայն յետոյ, խոհական հայր, ժպտացիր դու, ասելով.
«Դէ՛հ, նստեցէ՛ք, վստահելով ինձ Ձեր մարմինն ու հոգին.
«Որովհետև վարժ է իմ ձեռն այս սանձերը բռնելու,
«Աչքս սովոր՝ ճարպիկ կերպով լաւ շրջաններ անելու։
«Մի ժամանակ ես կառք քշելն Շարասբուրգում սովրեցի,
«Երբ որ այնտեղ երիտասարդ բարոնի հետ գընացի.
«Կառքն ամեն օր դղրդալով հանում էի դարպասով,
«Մինչ լորենիքն ու դաշտերը քշում փոշոտ ուղիով,
«Զբօսանքի համար խառնուած ժողովրդի ճիշտ մէջը։

Դեղագործը մատամբ հանդիստ եկաւ, նստաւ կառքի մէջ,
Նման մէկին, որ պատրաստ է խելօք ոստիւն անելու։
Նժոյգները տուն սլացան, կարօտելով ախոռին.
Նոցա ուժեղ սմբակներից բարձրանում էր դեռ փոշին։
Բայց պատանին երկար կանգնած՝ այդ փոշին էր մինչ դիտում,
Որ ցնդում էր. այսպէս ահա կանգնել էր նա անդադար։

Է. ԷՐԱՏՈ [1]

Դորոթէա.

Ինչպէս նախ քան մայր մտնելը՝ ցած գլորուող արևին
Ուղևորը վերջին անգամ նայում է իւր աչքերով,
Յետոյ մռայլ պուրակի մէջ նորա պատկերն է տեսնում
Ծայռի կողքին տատանուելիս, ուր որ աչքը դարձնում է՝
Շարժւում է նա, վայել է տալիս, օրօրւում է երևնագեղ,—
Այդպէս Հերմանն իւր աչքերով կոյսի պատկերն էր տեսնում՝
Հանդարտ, հեղիկ, և կարծես թէ գալիս էր նա դաշտերով:
Սակայն ահա սթափուեցաւ հրաշալի անուրջից
Եւ ծանրաքայլ հասաւ նա գիւղ, որտեղ կրկին զարմացաւ,
Որովհետև նորից տեսաւ բարձր հասակն աղջկայ.
Մի լաւ դիտեց. ո՛չ, ցնորք չէր. հէնց ինքն էր նա, այն աղջիկն.
Երկու սափոր՝ մեծ ու փոքր, կանթից բռնած ձեռքերում
Գնում էր նա ժիր և աշխոյժ դէպի մօտիկ մի աղբիւր:
Հերմանն ուրախ դիմաւորեց և աղջկայ պատկերից
Վստահութիւն, ոյժ ստացաւ ու ձայն տուաւ զարմացած.
«Քեզ եմ տեսնում, կորիճ աղջիկ, այդպէս պատրաստ՝ շարունակ
«Խնամելու ուրիշներին, կազդուրելու խեղճերին:
«Ինչո՞ւ ես դու մենակ գալիս այս աղբիւրը հեռաւոր,
«Մինչդեռ դոհ են ուրիշները գիւղում եղած ջրերով:
«Ճշմարիտ է, սորա ջուրը կազդուրիչ է և համեղ:
«Տանում ես դու այն հիւանդին, որին ինքդ փրկեցիր:

---

1 Բնաբական բանաստեղծութիւնը հովանաւորող մուսան. երգում է պիրանարների երջանկութիւնը. ձևոին բռնած ինանդի բնար:

Աղջիկն այսպէս պատասխանեց՝ բարևելով պատանուն.
«Աղբիւրի մօտ իմ գալու վարձն արդէն այստեղ ստացայ,
«Երբ տեսնում եմ բարի մարդուն, որ մեզ շատ բան պարգևեց.
«Պարգևողին տեսնելն էս հաճելի է նուէրի պէս.
«Եկէք և Դուք անձամբ տեսէք, ով է շահւում Ձեզանից,
«Եւ գոհութիւն ընդունեցէք Ձեր կազդուրած մարդկանցից:
«Իսկ թէ արդեօք ինչո՞ւ եկայ այստեղից ջուր տանելու,
«Որ աղբիւրը պարզ, անսպառ բղխում էր միշտ իւր միջից,
«Այս կասեմ Ձեզ. անհեռատես մարդիկն այնտեղ, գիւղի մէջ
«Պղտորել են մաքուր ջրերն՝ անցկացնելով ձի և եզ,
«Բնակիչներին ջուր պարգևող առատաբուղխ աղբիւրից.
«Կեղտոտել են լուացքներով բոլոր տաշտերն այդ գիւղի,
«Նոյնպէս մաքուր ջրհորները պղտորել են, կեղտոտել,
«Որովհետև ամեն մէկը իւր մասին է մտածում,
«Այլոց մասին չհոգալով՝ իւր ուզածն է ձեռք բերում:

Այսպէս ասաց, ընկերոջ հետ լայն ասանդուղքով իջան ցած
Եւ աղբիւրի ներքին մասում թմբի վերայ նստեցան:
Այդ միջոցին Դորոթէան ջուր վերցնելու կռացաւ.
Երկրորդ կուժն էլ Հերմանն առաւ, կռանալով դէպի ցած.
Նորա տեսան կապոյտի մէջ արտացոլած վոյդ դէմքեր,
Հայելու մէջ՝ օրօրուելով բարևեցին սիրալիր:

«Թոյլ տուր խմեմ», ասաց նորան ուրախ, զուարթ պատանին.
Կուժն աղջիկը մօտեցրեց. նորա երկուսն յենուեցան
Սափորներին, որ շունչ առնեն, Աղջիկն ասաց ընկերին.
«Առա՛, ինչպէս այստեղ ես դու՝ առանց կառքի, ձիերի,
«Մեր պատահած տեղից հեռու. ինչպէս եկար դու [1] այստեղ:

Բայց պատանին այդ ժամանակ ցած էր նայում մտածկոտ.
Յետոյ աչքերն ուղղեց նորան, հայեացքի մէջ սուզուեցաւ,
Իրեն ուրախ, զուարթ զգաց. սակայն դժուար համարեց
Խօսք բանալը սիրոյ մասին. օրիորդի աչքերում
Նա սիրոյ տեղ աղնիւ խօսքի մի պահանջ էր նկատում:

---

1 Դորոթէան առաջին անգամ մտերմօրեն «դու» ասելով է դիմում Հերմանին:

Բայց նա շուտով ուշքի եկաւ, այսպէս ասաց սրտագին.
«Թոյլ տուր խօսեմ, ո՛վ սիրելիս, պատասխան տամ հարցերիդ.
«Քեզ համար եմ այստեղ եկել, էլ ես ինչո՞ւ թաքցնեմ.
«Շատ երջանիկ կեանք եմ վարում ծնողներիս հետ միասին.
«Նոցա սրտանց օգնում եմ ես ընտանեկան գործերում՝
«Իրը և իրենց միակ որդին. անթիւ գործեր մենք ունենք:
«Բոլոր աքտերն ես եմ հոգում. իսկ տնտեսը իմ հայրն է.
«Աշխոյժ մայրս մեր տան ամբողջ տնտեսութեան ոգին է:
«Դու էլ, անշուշտ դիտես ինչպէս տանջում են միշտ չար ծառայք
«Խեղճ տանտիկնոջ՝ իրենց տնմիտ, թեթև վարքով, դողութեամբ,
«Սարսափելով սեպաները փոխարինել սեպով:
«Մայրս վաղուց ցանկանում էր տանն ունենալ մի աղջիկ,
«Որը ոչ թէ միայն ձեռքով, այլ և օգնէր իւր սրտով,
«Փոխարինէր այն աղջկան, որին կորցրել է վաղուց:
«Եւ երբ այսօր սայլի վերայ տեսայ քեզ ժիր և աշխոյժ,
«Ձեռներդ ուժեղ, անդամներիդ առողջութիւն՝ անթերի,
«Երբ լսեցի քո իմաստուն, խելօք խօսքերն՝ հիացայ,
«Տուն վաղեցի, օտարուհուդ ըստ արժանւոյն գովեցի
«Ծնողաց մօտ. այժմ եկայ նոցա կամքը յայտնելու,
«Որ և նոյնպէս իմ կամքն է: Ների՛ր անկապ խօսքերս:

Աղջիկն ասաց. «Ո՛չ, մի՛ քաշուէք, շարունակեցէք Դուք խօսել.
«Ձեզանից չեմ վիրաւորուի. մեծ հաճութեամբ լսեցի.
«Բայց միայն թէ պա՛րզ ասացէք՝ ես խօսքերից քաշուող չեմ.
«Ուզում էք ինձ տանել Ձեր տուն՝ իբրև վարձուած աղախնի,
«Որ պահպանեմ և խնամեմ Ձեր տունը շէն, բարեկարգ,
«Համարելով ինձ մի համեստ և գործունեայ, ժիր աղջիկ,
«Որ գործելու շնորք ունի, հեղ է սրտով ու խոնարհ:
«Առաջարկդ համառօտ էր, պատասխանն էլ կարճ լինի.
«Այո՛, կըգամ, հեռանալով ճակատագրիս որոշման.
«Իմ պարտքն արդէն կատարեցի. ծննդականին ես տարայ
«Տէրերի մօտ. նորա բոլորն ապատումով ուրախ են:
«Արդէն շատերն հաւաքուել են, միւսներն էլ կերևան.
«Ցոյս են դրել մօտ օրերում վերադառնան հայրենիք:
«Պանդուխտ մարդիկ այդպէս իրենց խաբում են միշտ յոյսերով.

«Բայց սին յոյսով ես չեմ խաբուել այս տխրալի օրերում,
«Որ մեզ համար էլ աւելի դառն օրեր են գուշակում.
«Արձակուել են երկրի կապերն, ո՛վ է երկին կապելու,
«Թէ ոչ վաղուց մեզ սպասող սարսափելի այն կարիք:
«Յօժար սրտով ես կընդունեմ, որ Ձեր տան մէջ գործելով
«Աղնիւ կնոջ հովանու տակ, կարողանամ ես սնուել:
«Կասկածելի հռչակ ունի թափառական օրիորդն:
«Այո՛, իսկոյն կըգամ Ձեզ հետ, երբ սափորներն հասցնեմ
«Եւ իմ բարի ընկերներից ես օրհնութիւն ստանամ.
«Եկէ՛ք, նոցա պէտքէ տեսնէք, ինձ նոցանից ստանաք:

Ուրախութեամբ լսեց տղան վճիռն աղնիւ աղջկայ,
Երկմտելով, արդեօք չասի՞ ճշմարտութիւնն հէնց այստեղ.
Բայց աւելի լաւ համարեց պատրանքի մէջ նա մընայ,
Որ հանի տուն և իւր սէրը այնտեղ միայն իմանայ:
Սակայն աւա՜ղ, կոյսի մատին տեսաւ ոսկէ մատանի...
Բայց թոյլ տուաւ, որ նա խօսէ, ինքը լսել ցանկացաւ:

Իսկ նա ասաց. «Եկէք գնա՛նք. այն աղջիկը, որ երկար
«Ուշանում է աղբիւրի մօտ, բամբասում են միշտ նորան:
«Սակայն սահուն աղբիւրի մօտ որքան քաղցր է զրուցել:

Այսպէս նորա ոտքի ելան՝ մի անդամ էլ նայելով
Աղբիւրի մէջ. նոցա սրտերն անուշ տենչով լցուեցան:
Կռանալով, երկու սափորն աղջիկն առաւ կանթերից
Ու բարձրացաւ. իսկ պատանին իւր սիրելուն հետևեց,
Սափորներից մէկը խնդրեց, որ ըեռը քիչ թեթևնայ:
«Թողէ՛ք, ասաց աղջիկն իսկոյն, այսպէս տանելն է դիւրին.
«Նա որ տէր է ինձ դառնալու, ինձ չպէտքէ ծառայէ:
«Մի՛ նայէք ինձ Դուք, այսպէս լուրջ՝ կարծես վիճակս խեղճ լինէր.
«Ըստ իւր կոչման կինը պէտքէ շուտ ոտքերէ ծառայել,
«Որովհետև ծառայելով իշխանութիւն կըստանայ,
«Որը տան մէջ պատկանում է միայն նորան իսկապէս:
«Այդպէս քոյրը վաղ է սկսում եղբօր համար ծառայել,
«Ամբողջ կեանքում ոտքի վերայ հօրն ու մօրն է նա լսում.
«Նորա գործն է՝ վերցնել, դնել, այլոց համար պատրաստել:
«Երնէ՛կ նորան, որի համար երբէք մի բան դառը չէ,

«Չի տարբերում գիշերային ու ցերեկուայ ժամերը,
«Որին երբէք գործը չնչին, ասեղը նուրբ չի թուում,
«Եւ ոչն կրեն մոռանում է, այլոց համար է ապրում։
«Եւ այդ բոլոր լաւ կողմերը պէտք են նորան այն ժամին,
«Երբ որ ծծկերն իւր հիւանդ մօր աչքի քունը կտրելով՝
«Կաթ է խնդրում, վշտի վերայ կրկին հոգսեր բարդելով։
«Քոան տղամարդ միանալով՝ այդ հոգսերը չեն քաշի.
«Եւ պէտք էլ չէ. սակայն մարդիկ երախտագէտ պիտ լինին։
Այս էր խօսում. և իւր անխօս ընկերոջ հետ միասին
Այգու միջով եկան, հասան այն ամբարի, կալի մօտ,
Ուր պառկել էր նոր ծննդկանն՝ ուրախ, զուարթ աղջկանց
Ու նորածին իւր մանկան հետ՝ անմեղութեան տիպարներ.
Եւ ներս մտան. միւս կողմից դատաւորը նոյն ժամին
Այնտեղ մըտաւ, ամեն ձեռքին բռնած փոքրիկ մի մանուկ.
Թշուառ մայրը մինչև այժմ կորցրել էր այդ երկուսին,
Որոնց ահա բարի եշխանն ամբոխի մէջ էր գտել։
Ուրախ-ուրախ նոքա եկան՝ բարևելու մայրիկին
Եւ հրճուելու նոր եղբօրով, այդ անծանօթ ընկերով.
Թռան դէպի Դորոթէան, բարևեցին սիրալիր
Եւ նորանից ջուր խնդրեցին, ուտելու հաց, նոյնպէս միրգ.
Դորոթէան շուտ ջուր տուաւ, մանուկները կշտացան.
Ծննդկանը, աղջիկները, դատաւորն էլ խմեցին։
Երբ բոլորը լաւ կշտացան, մաքուր ջուրը դուվեցին,
Որ թթուաշ էր և կազդուրիչ՝ առողջարար և անուշ։
Յետոյ խօսեց բարի աղջիկն ու լուրջ դէմքով այս ասաց.
«Գուցէ արդէն վերջին անգամ այս ամանը մօտեցրի
«Բերաններիդ ու զով ջրով ձեր շրթունքը թրջեցի։
«Բայց երբ յետոյ ասթ օրերում ձեզ խմիչքը կազդուրէ,
«Երբ ստուերում հանգստութիւն, աղբիւրի ջուր վայելէք,
«Այն ժամանակ յիշեցէք ինձ, իմ գործերը սիրալիր,
«Որ աւելի սիրուց արի, քան թէ երբև ազգական։
«Ինչ բարիք որ դուք ինձ արիք, ամբողջ կեանքում կը յիշեմ.
«Ակամայ եմ թողնում ես ձեզ. սակայն այժմ ամեն մարդ
«Բեռ է միւսին, քան սփոփանք. և պէտք է մենք բոլորով

«Ցրուենք օտար երկրներում, թէ վերադարձն արգելուի։
«Տեսէք, ահա այն պատանին. մենք որան ենք պարտական
«Նուէրները, մանկան պալուլն ու այն համեղ պաշարը.
«Սա եկել է, վարձում է ինձ՝ իրենց տունը պահպանեմ
«Եւ իւր հարուստ ու պատուական ծնողներին ծառայեմ.
«Ես չեմ մերժում. ուր էլ լինի, ծառայում է աղջիկը.
«Ծանր բան է՝ տանը նստել և ուրիշներն աշխատեն։
«Յօժար սրտով ես կըգնամ. խելօք է այս պատանին,
«Հայրն էլ, մայրն էլ, ինչպէս որ այդ հարուստ մարդուն է վայել։
«Արդ, սիրելիք, մնաք բարով։ Այսուհետև խնդացէք
«Ձեր վառվռուն նորածինով, որ նայում է Ձեր դէմքին,
«Երբ դոյնդոյն խանձարուրով սեղմէք նորան Ձեր կրծկին.
«Օ՜, յիշեցէք այս պատանուն, որ պարգևեց այդ բոլորն.
«Ես, որ ձերն եմ, ինձ էլ պէտք է սա հագցնէ, սնունդ տայ։
«Ձեզանից էլ, ով ազնիւ մարդ, դատաւորին ասաց նա,
«Շնորհակալ ես կըլինիմ. ինձ հայր եղաք շատ անգամ.
Յետոյ լացող ծննդկանի առաջ չոքեց և նորան
Համբուրելով, ջերմ օրհնութեան մրմունջները նա լսեց։
Իսկ պատուելի դատաւորը այսպէս ասաց Հերմանին.
«Նման էք Դուք այն խելամուտ տնտեսներին, բարեկամ,
«Որ տան գործերն աշխատում են աշխոյժ մարդու ձեռքը տալ.
«Այո՛, յաճախ տեսել եմ ես, որ երբ ուզում են մարդիկ՝
«Չի, եղ, ոչխար գնել, փոխել, ուշի ուշով զննում են։
«Սակայն երբ որ բարի է մարդ, կըպահպանէ ամեն ինչ.
«Երբ չար է նա ձեռնարկութեամբ, կըկործանէ ամեն բան.
«Եւ այդ մարդուն բախտի բերմամբ ընտրում են պատահմամբ,
«Բայց շուտափոյթ վճռի համար շատ են զղջում, սակայն ուշ։
«Երևում է, հասկացող էք, Դուք ընտրեցիք մի ազնիւ,
«Կտրիճ աղջիկ, որ ծառայէ ծնողներիդ Ձեր տան մէջ։
«Բայց նորա հետ լաւ վարուեցէք. քանի որ Ձեր տնտեսն է,
«Նա կըբռնէ Ձեզ քրոջ տեղ, տան աղջիկը կըլինի։
Այդ միջոցին ծննդկանի ազգականներն եկան մօտ՝
Շատ բան վերցրած, և ասացին, որ վարձել են մի լաւ տուն։
Երբ խմացան կոյսի վճիռն, Հերմանին էլ օրհնեցին՝

Խորհրդաւոր հայեացքներով և զանազան մաքերով.
Երևի թէ շշնջում էր մէկը միւսի ականջին.
«Թէ որ տէրը վերադարձնայ, նա բախտաւոր կըլինի»:
Այնուհետև բռնեց Հերմանն աղջկայ ձեռքից և ասաց.
«Արի՛ գնանք, ուշ է արդէն և քաղաքն էլ մօտիկ չէ»:
Կանայք բարձր աղաղակով օրհնեցին գրկեցին.
Բայց Հերմանը քաշեց նորան, որ բարևներ էր տալիս.
Փոքրերն խոկոյն լացով, կոծով դդեստներից կախ ընկան
Ու բաժանուել չէին ուզում իրենց երկրորդ մայրիկից:
Բայց կանանցից մէկը, միւսը նրանց դսպելով ասացին.
«Հանգի՛ստ, տղայք, գնում է նա դէպի քաղաք և առատ
«Շաքարահաց կբերէ ձեզ, որ եղբայրը պատուիրեց,
«Երբ արագիլն [1] անցրեց նորան հացագործի մօտիցը.
«Շուտ կրգայ նա թղթէ սիրուն ոսկեզօծ լի պարկերով:
Մանուկները նոր պակ եկան. Հերմանն հաղիւ ազատեց
Գրկողներից, թաշկինակներն հեռուում շարժող կանանցից:

Ը. ՄԵԼՊՈՄԵՆԻ [2]

Հերման եւ Դորոթէա.

Գընում էին նորա մանող արեգակի դէմ ու դէմ,
Որ թագչում էր ամպերի տակ մրրկագոյժ [3], թանձրամած
Եւ երբեմն քօղի տակից իւր ոսկեվառ հայեացքով
Դաշտի վերայ խորհրդաւոր իրեն փայլն էր տարածում.
Հերմանն ասաց. «Սպառնացող փոթորիկը երանի

[1] Արագիլը Գերմանիայում համարւում էր բնական օձախի հովանաւոր. նա էր թնջանիին զաւակներ պարգևողը:

[2] Ողբերգութեան մուսան. բազմածալ ու երկար զգեստով, ողբերգակի դիմակով:

[3] Սիրանար զոլի համար որպես մօտիկ փորձանքի նշան:

«Կարկուտ, հեղեղ չթափէ ցած, որովհետև լաւ հունձ կայ:
Նոքա երկուսն հրճւում էին ալեծածան հասկերով,
Որ անցնելիս մինչև նոցա բարձր ուսերն էր հասնում.
Այնուհետև աղջիկն ասաց առաջնորդող ընկերին.
«Ո՛վ բարի մարդ, Դուք, որ շուտով լինձ բախտաւոր կրդարձնէք,
«Ցուն, տեղ կրտաք, մինչ շատերին սպառնում է փոթորիկ,
«Ամենից շուտ յայտնեցէք լինձ ընոյթը Ձեր հօր ու մօր,
«Որոնց սրտանց ուզում եմ ես ապագայում ծառայել.
«Ով իւր տիրոջ ճանաչում է, հեշտ կարող է գոհացնել,
«Իմանալով՝ նորա համար ինչ բաներ են կարևոր,
«Դէպի որոնց նա իւր մաքով հակուած է՝ պինդ, հաստատուն.
«Ասացէք լինձ, ծնողներիդ ինչ մկրտութեամբ ես շահեմ:
Նորան այսպէս պատասխանեց բարի, խելօք պատանին.
«Օ՜, որքան դու լաւ ես դատում, բարի, ազնի՛ւ օրիորդ,
«Որ սկզբում ծնողներիս սիրտն ես ուզում ճանաչել:
«Մինչև այսօր հօրս շահել իզուր էի աշխատում՝
«Զբաղուելով անտեսութեամբ, ինչպէս իմս այդ լինէր,
«Գիշեր, ցերեկ հոգ տանելով այդու մասին, արտերի:
«Հեշտ է մօրս գոհացընել. գնահատել գիտէ նա.
«Այդպէս և դու նորա աչքին շատ լաւ աղջիկ կերևաս,
«Եթէ մեր տունն այնպէս պահես, ինչպէս քոնը կրպահես:
«Բայց հօրս՝ ոչ, որովհետև արտաքին փայլն է սիրում:
«Բարի՛ աղջիկ, լինձ անպակաս և տառնասիրտ մի՛ կարծիր,
«Երբ շուտ իմ հօր թերութիւններն օտարոտ յայտնեցի.
«Այո՛, կերդուեմ, որ առաջին անգամ միայն դուրս թռաւ
«Այսպիսի խօսք իմ բերանից, որ սովոր չէ շաղփաղփել:
«Բայց սիրտս ես քո նեղշնչած վստահութեամբ եմ բանում.
«Բարի հայրս սիրում է միշտ արտաքին փայլն աշխարհում,
«Պահանջում է սիրոյ ցոյցեր, ինչպէս նաև յարգանքի.
«Ամենավատ ծառայից նա գուցէ շատ գոհ մնայ,
«Որ կօգտուի հօրս այս կողմից, իսկ շատ լաւին նա կատէ:
Ուրախ-ուրախ աղջիկն ասաց, քայլերն արագ շարժելով,
Թեթև ու ժիր շտապելով արդէն մթնած շաւիղով.
«Ես յոյս ունեմ, որ կարող եմ գոհացընել երկուսին,

«Որովհետև մայրիկիդ սիրտն հէնց նման է իմ սրտին,
«Իսկ արտաքին ձևին, փայլին մանկութիւնից եմ սովոր:
«Մեր հարևան ֆրանսիացիք մի ժամանակ այդ ձևերն
«Ցարդում էին. ազնուական, քաղաքացի, գիւղացի
«Սովոր էին. ամեն մէկը դաս էր տալիս ուրիշին:
«Ու նոցանից նոյնպէս և մեր գերմանացոց մէջ մտաւ,
«Որ մանուկներն առաւօտեան հօր, մօր ձեռքերն համբուրեն,
«Եւ «բարի լոյս» ասեն նոցա, ամբողջ օրը լաւ մընան:
«Ես այն ամենն, ինչ որ գիտեմ, ինչ բանի որ սովոր եմ,
«Ինչ բղխում է սրտիս խորքից, միշտ ցոյց կըտամ ծերունուն:
«Բայց ո՞վ կասէ, արդեօք, ի՞նչպէս պէտք է վարուեմ ես քեզ հետ,
«Որ իմ տէրը պէտք է լինես, տան զաւակն ես մինուճար:

Այսպէս ասաց, հէնց նոյն ժամին հասան նոքա տանձենուն.
Ջինջ երկնքից հրաշալի փայլ էր սփռում վառ լուսին.
Արդէն մութն էր. արեգակի վերջին շողքը էլ չկար.
Նոցա առաջ կանգնել էին լոյսի կէտեր դէմ առ դէմ,
Պայծառ՝ ինչպէս օր-ցերեկը, և գիշերուայ ստուերներ:
Մտերմական նոքա հաբցումն ուրախ լսեց պատանին,
Այն գեղեցիկ տանձենու տակ, որ սիրելի էր նոքան
Եւ հէնց այսօր սիրուց թափած իւր արտասուքն էր տեսել:
Երբ որ աղջիկն այնտեղ նստաւ որ մի փոքր շունչ առնէ,
Նոքա ձեռքից սիրահարուած տղան բռնեց և ասաց.
«Թող քո սիրտը խօսէ քեզ հետ, իսկ դու նոքան հեռևիր».
Բայց ուրիշ բան չհամարձակուեց, թէև ժամն էր շատ յարմար.
Վախենում էր, թէ մի դուցէ պատասխանը «ոչ» լինի.
Ա՜խ, իւր ձեռքով նա շոշափեց չարագուշակ մատանին...
Այսպէս նոքա միմեանց դէմաց նստել էին լուռ ու մունջ.
Բայց օրիորդն սկսեց խօսել. «Ի՞նչպէս փայլը վառ լուսնի
«Բաղցը է թւում, պայծառութեամբ նմանւում է ցերեկին.
«Քաղաքի մէջ թէ տուն թէ բակ տեսնում եմ պարզ, ծածկի տակ՝
«Մի լուսամուտ, և կարծես թէ տեսնում են ապակիք:

«Այդ քո տեսածն, ասաց տղան ինքն իրեն զսպելով,
«Մեր տունն է այդ, և պէտք է քեզ տանեմ ինձ հետ հէնց այնտեղ.
«Իսկ այնտեղի ծածկի տակի լուսամուտը խցինս է,

«Որը դուցէ քոնը լինի, նորոգում ենք մեր տները [1]:
«Այս արտերն էլ մերն են նոյնպէս, վաղը հունձը կըսկսուի.
«Հանգիստ կառնենք այս ստուերում. ուրախ-ուրախ կըճաշենք,
«Բայց եկ այժմ իջնենք, գնանք՝ այդու մինջով, պարտէզով,
«Որովհետև, նայի՛ր, արդէն մօտենում է փոթորիկ՝
«Փայլակներով. շուտով լուսինն ամպերի տակ կըմտնի:

Նոքա եկան ու գնացին դէպի ներքև դաշտերով՝
Ցորնի մինջից, այդ գիշերուայ պայծառութեամբ հրճուելով.
Նոքա հասան մինչև պարտէզ և ստուերի մէջ մտան:
Եւ նա այսպէս իւր սիրելուն առաջնորդեց դէպի ցած
Մինչ հովանոց վեր բարձրացող անտաշ քարէ սանդուղքով:
Կամաց աղջիկն իջնում էր ցած՝ ձեռքը նոքա ուսերին.
Դողդոջ լուսով ծառոց մինջից նոցա լուսինն էր նայում,
Մինչև ծածկուեց սև ամպերով. զոյգը մնաց մթան մէջ:
Կտրիճ տղան լաւ էր պահում ուսին կռթնած աղջկան,
Որ ծանօթ չէր ճանապարհին և սանդուղքից իջնելիս՝
Սայթաքեցաւ, ոտքը ճըմաց, քիչ էր մնում վայր ընկնէր.
Ուշիմ տղան իսկոյն դարձաւ, պարզեց նոքան իւր բազուկն
Ու պահպանեց իւր սիրելուն, որ մեղմ ընկաւ ուսերին.
Այսպէս նոցա կուրծքը կրծքին, այտը այտին հպուեցաւ.
Զսպած կամքով տղան կանգնեց՝ ինչպէս արձան մարմարեայ,
Նոքան ամուր չսեղմելով [2], դիմանում էր ծանրութեան:
Զգում էր նա քաղցը մի բեռ ու ջերմութիւն մի սրտի,
Նոքա շնչի բալասանը, որ շրթներին էր հասնում.
Եւ առնական զգացմունքով նա յաղթ կնոջ դիմացաւ:
Սա թագցրեց իւր սրտի ցաւն ու կատակով այս ասաց.
«Խելօք մարդիկ ասում են, թէ չար բան պէտք է սպասել,

---

1 Իւր անզգուշութիւնը թաքցնելու համար Հերմանն այդ խօսքերն է հնարում:

2 Այստեղ երևում է Հերմանի զօրեղ կամքը, առնական գեղեցկութեան ու բարոյականութեան ներդաշնակութիւնը: Նորա հայրը նոյնպիսի հանգամանքում, ինչպես գիտենք, չի կարողացել իրեն զսպել (երգ Բ):

«Երբ շէմքի մօտ տուն մտնելիս մարդու ոտը կրճմայ.
«Եւ յիրաւի, ես ինձ համար մի լաւ նշան կուզէի:
«Քիչ սպասենք, որպէսզի դու չնախատուես խղուր տեղ,
«Թէ կաղ է քո աղաղակը, լաւ անտես չես երևում:

Թ. ՈՒՐԱՆԻԱ[1]

Հեռանկար.

Դուք, մուսաներ[2], անկեղծ սիրոյ հովանաւորը ու պաշտպան,
Որ պատանուն մինչև այժմ եղաք բարի առաջնորդ,
Եւ աղջկան՝ չնշանուած, նորա կրծքին սեղմեցիք,
Դուք օգնեցէք, որ սիրահար զոյգի կապերն հաստատուեն.
Ցրուէք խիզոն նոցա բախտին սպառնացող սև ամպեր:
Նախ ասացէք, թէ արդեօք տանն ինչ է այժմ պատահում:

Մայրը արդէն երբորդ անգամ մարդկանց սենեակները մտաւ,
Որտեղից նա մի քիչ առաջ դուրս էր եկել շփոթուած,
Խօսք բանալով յանկարծ մթնող լուսնի մասին, վոթորկի,
Իւր բացակայ որդու մասին ու գիշերուայ փորձանքի:
Նախատում էր ընկերներին, որ աղջկան չտեսած,
Նորա ձեռքը դեռ չնդրած՝ բաժանուել են պատանուց:
Զարկեր մի՛ ծանրացնիր, ասաց հայրը դժկամակ.
«Տեսնում ես, որ մենք էլ ելքին սպասում ենք անհամբեր:

Բայց դրացին նստած տեղից այսպէս ասաց անվրդով.
«Միշտ այսպիսի վատ ժամերին գոհութեամբ եմ ես յիշում

1 Աստղագիտական մուսան. գլուխը պսակած աստղազարդ պսակով, մի ձեռքում բռնած երկրագունդ, միւս ձեռքում՝ կարկին:

2 Բանաստեղծն առաջին անգամ է դիմում մուսաներին:

«Իմ հայրիկին, որ դուրս խլեց մանկութեանս ժամանակ
«Սրտանեղութեան ամեն նշոյլ, մի մաղ անգամ չթողեց.
«Ես համբերել սովորեցի իմաստունից աւելի:
Ցէր հայրն ասաց. «Դէ՛հ, պատմեցէք, ինչ հնարքներ գործ դրեց»:
«Ուրախութեամբ ես կրպատմեմ, պատասխանեց դրացին.
«Կարողէք դուք օգուտ քաղել: Իմ մանկութեան ժամանակ
«Մի կիւրակէ ես անհամբեր կսռքին էի սպասում,
«Որով պէտքէ լորինների աղբիւրը մենք գնայինք:
«Կառքն ուշացաւ, աքիսի պէս վազում էի այս-այն կողմ,
«Պատուհանից դէպի դուռը. սանդուխքներով վեր ու վար:
«Ձեռքերիս մէջ եռ էր ընկել. տեղանն էի չանգռռում,
«Վազում էի ոտնատրոփ, քիչ էր մնում, որ լայի:
«Հանդարտ մարդը տեսնում էր այս. սակայն երբ որ վերջապէս
«Իմ դժուութեան չափն անցկացաւ, նա իմ թևից մեղմ բռնեց,
«Տարաւ դէպի լուսամուտն ինձ և այս խելօք խօսքն ասաց.
«Տեսնո՞ւմ ես դու, փակ է այսօր հիւսնի խանութն, իսկ էգուց
«Բաց կլինի. շարժուում են միշտ այնտեղ ուրագ ու սղոց,
«Առաւօտից մինչ երեկոյ ժամերն աշխոյժ են անցնում.
«Բայց լսի՛ր ինձ, լա՛ւ ուշք դարձրու. կրգայ մի օր, առաւօտ,
«Երբ որ վարպետն իւր գործակից ընկերներով կաշխատէ,
«Որ մի դագաղ քեզ պատրաստէ. և այդ կանէ նա շուտով.
«Տախտակներից շինած տնակն խիզոն այստեղ կրբերեն,
«Որ նախ իւր մէջ չհամբերող մարդուն է շուտ ընդունում,
«Ցետոյ միայն համբերողին. ծանր խփով կրծածկեն:
«Եւ այդ բոլորն իմ մտքի մէջ պակերացրի ես խիզոն.
«Տախտակները կցուած տեսայ ու սև ներկը՝ պատրաստուած:
«Ցետոյ նստայ համբերութեամբ, սպասելով՝ կառքը գայ:
«Եւ այն օրից երբ որ մարդիկ տեսնում եմ, որ անհամբեր
«Վազվզում են այսկողմ-այնկողմ, դագաղն եմ միշտ ես յիշում»:

Ծիծաղելով տէր հայրն ասաց. «Մահուան[1] պատկերն ահռելի՝
«Իմաստունին սոսկալի չէ, բարեպաշտին՝ վերջին կէտ.

1 Այդ իմաստից խօսքերը գրուեցան այն վարագոյրի վրայ, որի յետեւ գտնւում էր վախճանուած բանաստեղծի մարմինը իւր տան մէջ:

«Մէկին նորից կեանք է մղում աշխատանքի դասերով,
«Միւսին գալոց բախտի համար յոյս ներշնչում վշտի մէջ.
«Մահը կեանք է նոցա համար: Հայրդ չունէր երաւունք
«Մահը որպէս ոչնչացում ցոյց տալ զգայուն պատանուդ:
«Աղնիւ ծերի արժանիքը պէտք է ցոյց տալ պատանուն,
«Իսկ ծերունուն՝ մանկութիւնը, որ երկուսն էլ խնդութեամբ
«Տեսնեն շրջանն յաւերժական, կեանքը կեանքով լրանայ:

Դուռն այդ ժամին յանկարծ բացուեց, սիրուն զոյգը մըտաւ ներս.
Սքանչացան բարեկամներն ու սիրալիր ծնողներ՝
Հարսի տեսքով, որ նման էր փերացուի պատկերին:
Այո՛, տան դուռն՝ անցկենալիս սաստիկ ցաւ էր երևում.
Շէմքից տունը նոր մտնողներն այդպէս ահա բարձր էին:
Ցղան կոյսին ներկայացրեց ծնողներին, ասելով.
«Այն աղջիկն է, որի նմանն ուզում էինք ունենալ.
«Սիրելի՛ հայր, արժանի է, նորան սիրով ընդունէք,
«Իսկ Դուք, մայրիկ, քննէք նորան տնտեսութեան գործերից,
«Տեսէք, որքան արժան է նա՝ Ձեզ շատ մօտիկ լինելու:
Ցեսոյ խսկոյն քահանային մի կողմ քաշեց, ասելով.
«Պատուարժա՛ն հայր, օգնեցէ՛ք ինձ այս հոգսի մէջ շտապով,
«Լուծէ՛ք հանգոյցն, որի լուծման սպասում եմ սրտադող.
«Որովհետև ես աղջկան երբ ամուսին չեմ բերել.
«Կարծում է նա, թէ եկել է երբև մեր տան աղախին.
«Վախենում եմ, որ երբ խօսենք պսակի մասին, նա փախչի:
«Իսկոյն վճռէ՛ք, թող նա երկար պատրանքի մէջ չմնայ.
«Նոյնպէս և ես էլ չեմ կարող տարակոյսի մէջ մընալ.
«Ձեր հանձարը ցոյց տուէք շուտ, որ յարգում ենք բոլորս էլ:
Եւ քահանան խսկոյն դիմեց այնտեղ նստած անձերին.
Սակայն աւա՜ղ, աղջկայ սիրտն արդէն սաստիկ խոցուեցաւ
Այն խօսքերով, որ անմեղ հայրն ուրախութեամբ այդ ժամին
Բոլորովին զուարթ սրտով, բարի մտքով էր ասել.
«Այո՛, որդեա՛կ, հաւանում եմ, հօրդ ճաշակին ունես դու,
«Որ ցոյց տուեց ուրիշներին իւր պատանի ժամանակ.

«Լաւին էր նա պարի կանչում և վերջապէս իւր համար
«Դեղեցկուհուն ընտրեց, բերաւ, ահա սորան, մայրիկիդ.
«Որովհետև ընտրած հարսից ճանաչուում է շուտ փեսան,
«Թէ ինչ սրտի տէր է, արդեօք, իւր արժէքը նա գիտէ:
«Բայց Դուք անշուշտ վճռի համար քիչ ժամանակ գործ դրիք.
«Թուում է ինձ, որ պատանուն շատ դժուար էր չհետևել:
Հերմանն հաղիւ լսում էր այս. դողում էր նա ողջ մարմնով.
Իսկ շրջանում այդ միջոցին տիրեց խորին լռութիւն:
Սակայն աղնիւ, բարի աղջիկն այս ծաղրական խօսքերից,
Ինչպէս որ այդ երեն թուաց, վիրաւորուեց, զգացուեց,
Ոտքի ելաւ, կարմրելով մինչև ծայրը ականջի.
Սակայն զսպեց նա ինքն իրեն, ուշքի եկաւ և ասաց
Անմեղ հօրը, բայց այս անգամ կսկիծն հաղիւ ծածկելով.
«Իսկապէս ինձ որդիդ այսպէս ընդունելու չբերաւ,
«Որ ինձ պատմեց իւր պատուարժան քաղաքացի հօր մասին.
«Եւ ես գիտեմ, Ձեր առաջն եմ, մի խելացի մարդու մօտ՝
«Ամենքի հետ խոհեմ վարուող և արժանեաց համաձայն:
«Բայց կարծես թէ դէպի մի խեղճ կարեկցութիւն Դուք չունէք,
«Որ տան շէմքից հէնց նոր մըտաւ և պատրաստ է ծառայել.
«Ապա թէ ոչ դառն ծաղրով այդպէս չէիք ինձ ցոյց տայ,
«Թէ իմ վիճակն ինչպէս Ձերուն ու Ձեր որդուն նման չէ:
«Իրա՛ւ, մտայ ինչպէս աղքատ, ձեռքիս բռնած մի կապոց.
«Ձեր ճոխ տունը Ձեզ միշտ ուրախ ու վստահ է դարձնում.
«Լա՛ւ գիտեմ ինձ և թէ որքան հեռո՛ւ եմ ես ձեզանից:
«Լա՞ւ է, մի՞թէ, որ ինձ խսկոյն խոցում էք Դուք ծաղրանքով,
«Որ դեռ հաղիւ շէմքին հասած՝ դուրս էք հանում Ձեր տանից:

Հերմանն ահով տեղից շարժուեց, աչքով արաւ տէրտերին,
Որպէսզի նա միջամտէ և այն սխալն ուղղէ շուտ.
Խելօքն խսկոյն առաջ անցաւ և տեսնելով աղջկայ
Լուռ զայրոյթը, զսպած թախիծն ու արտասուքն աչքերի,
Իւր սրտի մէջ նախ վրձռեց՝ չուղղել խսկոյն այդ սխալն,
Այլ աղջկայ յուզուած հոգին նախ լաւ քննել ու փորձել:
Եւ նա դիմեց օրիորդին՝ այս փորձնական խօսքերով.

«Անտարակոյս լաւ չէ՛ս դատել, ո՛վ դու պանդուխտ օրիորդ,
«Որ այդպէս շուտ որոշել ես օտարներին ծառայել.
«Հրամայող տիրոջ տան մէջ ոտք դնելը չես կշռել.
«Համաձայնելն ամբողջ տարուայ քո վիճակն է որոշում
«Եւ մի այսն ստիպում է շատ բաների համբերել:
«Ծառայութեան դժուարութիւնն յօդնեցուցիչ ուղին չէ,
«Ոչ էլ անվերջ աշխատանքից թափած դառն քրտինքը.
«Գործից ազատ եռանդուն մարդն օգնում է միշտ ծառային.
«Այլ որ պէտքէ տանել տիրոջ նախատինք ու հաճոյքներ,
«Երբ այս ու այն պահանջում է՝ հակասելով ինքն իրեն,
«Տաք ընոյթը տանտիրուհու, որ շատ շուտ է զայրանում,
«Իսկ տղայոց վարքերը ըիրտ, ամբարտաւան ու կոպիտ.
«Հեշտ չէ՛ տանել և բացի այդ պարտքն էլ հշտիւ կատարել՝
«Անհանգիստ, շուտ, նոյնիսկ առանց տրտունջի:
«Այդ բաներին ընդունակ չէս, որ հայրիկի կատակից
«Դու վշտացար. և բացի այդ տարօրինակ մի բան չէ
«Զարչարել մի սիրուն աղջիկ, որ դուր եկել պատանուն:

Աղջիկը շատ զգացուեցաւ դիպչողական խօսքերից.
Էլ չդսպեց նա ինքն իրեն. սիրտը սաստիկ յուզուեցաւ,
Կուրծքը թընդաց և մի հառաչ դուրս սլացաւ այնտեղից.
Յետոյ խկոյն վրայ բերաւ, ջերմ արտասուք թափելով.
«Օ՜, խելօքը, որ ուղում է փորձանքի մէջ խորհուրդ տալ,
«Զգիտէ, որ մեր սրտերը չեն սփոփուի սառ խօսքով
«Այն վշտերից, որ մի բարձր ճակատագիր վիճակեց:
«Երջանի՛կ էք. կատակն ինչպէս կարող է ձեզ վրդովել.
«Բայց հիւանդը ցաւ է զգում նոյնիսկ թեթև շփումից:
«Ոչինչ օգնել ինձ չի՛ կարող, թէ կեղծել իսկ յաջողուի.
«Թո՛ղ պարզուի այն, ինչ որ յետոյ պէտքէ ծնի նոր վշտեր
«Եւ դուցէ ինձ թագուն մաշող դժբախտութեան մէջ ձգէ:
«Թողէք գնա՛մ. ես չե՛մ կարող այսպէս մընալ այս տան մէջ.
«Ես կրկնամ որոնելու իմ բարեկամ խեղճերին,
«Որոնց թողի տանջանքի մէջ, լաւն ընտրելով ինձ համար:
«Ա՛յս է հաստատ իմ որոշումն. ուստի կարող եմ ես այն

«Խոստովանել, ինչ որ երկար պէտքէ պահուէր սրտիս մէջ:
«Այո՛, սաստիկ վշտացայ ես հօր այդպիսի ծաղրանքից.
«Ես հպարտ չեմ կամ զգայուն, որ վայել չէ աղախնին,
«Այլ խսկապէս իմ սրտի մէջ համակրանք արթնացաւ
«Դէպի այսօր իբրև երկիչ հանդիսացող պատանին:
«Երբ ինձանից նա հեռացաւ, նորան չէի մոռանում.
«Այն երջանիկ օրիորդի մասին էի մտածում,
«Որին արդէն դուցէ սրտանց ընտրել է նա իւր համար:
«Երբ որ նորան աղբիւրի մօտ կրկին տեսայ, հրճուեցի
«Իւր պատկերով. կարծես երգնի մի ոգի էր տեսածս.
«Նորան սիրով հետևեցի, երբ ինձ ընտրեց աղախին:
«Բայց իմ սիրտը ճանապարհին (խոստովանանք լինի այս)
«Ցոյս էր տածում, թէ դուցէ ես արժանանամ իւր ձեռքին,
«Թէ որ դառնամ մի ժամանակ տան նեցուկը պնտանի:
«Բայց ա՜խ, այժմ տեսնում եմ ես ինչ փորձանք է սպառնում,
«Ապրելով այն պատանու հետ, որին սիրել եմ լռիկ:
«Եւ հէնց այժմ զգում եմ ես, թէ մի աղքատ, խեղճ աղջիկ,
«Թէև ընտիր, որքան օտար, որքան խորթ է հարստին:
«Ես այս բոլորն ասացի ձեզ, որ այն սի՛րտը ճանաչէք,
«Որին խոցեց այս վիճակը ինձ շնորհող պարագան:
«Որովհետև սրտիս լռիկ բաղձանքները ծածկելով՝
«Կը տեսնէի, թէ ինչպէս նա հարս կրբերէր իւր համար.
«Այն ժամանակ թագուն վշտերս ինչպէս պէտքէ տանէի:
«Յաջողութեամբ զգուշացայ և գաղտնիքը դուրս թռաւ
«Կրծքիս միջից այն ժամանակ, երբ դեռ վէրքս է բուժելի:
«Ահա բոլորն ասացի ես. էլ ո՛չ մի բան չի կարող
«Ինձ այս տան մէջ երկար պահել, ուր յուզուել եմ, ամաչել՝
«Անկեղծօրէն սրտիս հակումն, իմ անմիտ յոյսն յայտնելով.
«Ոչ սև դիշե՛ր՝ ցած խոնարհուող մութ ամպերով ծածկուող,
«Ոչ որոտմո՛ւնք (որ լսում եմ), ինձ չե՛ն կարող արգելել,
«Ոչ էլ դրսում հեղեղի պէս թափուող տարափն անձրևի,
«Ոչ ոռնացող դոռ փոթորիկ. տխուր փախի ժամանակ
«Այդ բոլորը տեսել եմ ես, երբ հասնում էր թշնամին:
«Եւ ես նորից դուրս եմ գնում, բաժանուելով աշխարհից՝

«Կրկին անգամ ժամանակի յորձանքի մէջ ընկնելու։
«Մնաք բարե՛ւ, էլ չե՛մ մընայ. իմ բանն արդէն վերջացաւ։
Այսպէս ասաց, արագ, արագ դէպի դուռը նա դիմեց,
Իւր թևի տակ պահպանելով հետը բերած կապոցը.
Բայց մայրը շուտ երկու ձեռքով խսկոյն գրկեց աղջկան՝
Փաթաթուելով նորա մէջքին և զարմացած՝ ձայն տուաւ.
«Ասա՛, ի՞նչ է նշանակում այդ արտասուքն անօգուտ.
«Ո՛չ, չե՛մ թողնի, որ դու գնաս, դո՛ւ ես հարսը իմ որդու։
Հայրը յանկարծ ոտքի ելաւ ու դժկամակ հայեացքով
Նայեց լացող օրիորդին, նեղսրտութեամբ ասելով.
«Այսպէս ահա իմ ծայրահեղ զիջողութեան վոխարէն
«Օրամըտին պատահում է ինձ մի տհաճ, տաղտուկ բան.
«Կանանց լացից, արտասուքից անտանելի բան չկայ,
«Որով նոքա միշտ սկսում են էլ աւելի կնճռել այն,
«Որ քիչ խելքով կարելի է կարգի բերել լուռ, անձայն։
«Ես չե՛մ կարող երկար դնել այս դիպուածը անսովոր.
«Ինքներդ դուք վերջացրէք, գընում եմ ես քնելու։
Արագ-արագ նա շուռ եկաւ և շտապեց ննջարան,
Ուր վռռուած էր անկողինը՝ սովորական հանգստի։
Սակայն Նորան բռնեց որդին, աղերսագին ասելով.
«Մի՛ շտապէք, հա՛յր, և մի՛ այդպէս խեղճի վերայ զայրացէք.
«Այս թիւրիմաց ելքի համար ես եմ միայն մեղաւոր,
«Որ և յանկարծ բարեկամը ձևանալով՝ էլ բարդեց։
«Պատուելի՛ հայր, Դո՛ւք ասացէք, Ձե՛զ եմ այս գործն ես յանձնում.
«Երկիւղ, զայրոյթ չաւելացնէք. լա՛ւ վերջ տուէք այդ գործին.
«Իմացէք, որ յետոյ ես Ձեզ դուցէ այսքան չյարգեմ,
«Զարախընդաց թէ Դուք լինիք և ոչ խելօք, իմաստուն։
Պատուելի հայրն ուրախ ժպտով պատասխանեց Հերմանին.
«Ի՞նչ հմտութեամբ կարող էինք խոստովանանք դուրս հանել
«Այս բարեսիրտ կոյսի սրտից, որ քննէինք իւր հոգին.
«Հոգսդ խսկոյն չփոխուեցա՞ւ ուրախութեան, հրճուանքի։
«Ինքդ խօսիր, ինչո՞ւ պէտք է բացատրեն ուրիշներն։
Հերմանն խսկոյն առաջ անցաւ և քաղցրութեամբ այս խօսեց.
«Արտասուքի և վաղանցուկ վշտի համար մի՛ զղջար,

«Որովհետև ուղածիս պէս մեր բաղդն ահա կինքուեցաւ։
«Ես չեմ եկել աղբիւրի մօտ աղախնի տեղ վարձելու
«Արժանաւոր օտարահուդ, այլ քո սէրը խնդրելու.
«Սակայն աւա՜ղ, վախկոտ աչքս համակրանքդ չտեսաւ,
«Այլ նա միայն աչքերիդ մէջ մտերմութիւն նկատեց,
«Երբ աղբիւրի հայելու մէջ բարևեցիր ժպտերես։
«Բեզ դէպի տուն առաջնորդելն արդէն կէսն էր իմ բախտի,
«Մնացածն էլ լրացրիր. օրհնեա՛լ լինիս ինձ համար։
Օրիորդը խորն յուզմունքով նայեց ուրախ պատանուն
Եւ չմերժեց գիրկն ու համբոյրն, ուրախութեան այդ լրումն,
Երբ սիրահար զոյգի համար գրաւական են սոքա՝
Իրենց գալոց երջանկութեան, որ անվերջ էր երևում։
Մնացածը հայր քահանան բացատրեց բոլորին.
Իսկ աղջիկը շնորհաշուք ու սրտագին մօտեցաւ
Եւ համբուրեց հօր աջ ձեռքը, որ մերժում էր՝ քաշելով.
Յետոյ ասաց. «Արդարութեամբ պէտք է ներէք յուզուածիս,
«Նախ իմ վշտի, յետոյ անկարծ ուրախութեան արտասուքն.
«Ա՜խ, ներեցէ՛ք նախկին յուզմունքն ու ներեցէ՛ք նոյնպէս այս.
«Թողէք գտնեմ երջանկութիւն, որ այսօր ինձ վիճակուեց։
«Այո՛, թող այն վիշտը նախկին, որի պատճառն ես եղայ,
«Թող վերջինը լինի այժմ. և աղախնի կատարած
«Հաւատարիմ աշխատանքը Ձեր աղջկան յանձնեցէք։

Հայրն աղջկան գրկեց խսկոյն, արտասուքը զսպելով.
Մայրը սիրով առաջ եկաւ և համբուրեց սրտագին,
Նորա ձեռքը պինդ սեղմելով. լացող կանայք լուռ էին։
Այնուհետև շուտով բռնեց քարի, խելօք քահանան
Նախ հօր ձեռքը, մատից հանեց նշանդրէքի մատանին
(Ո՛չ այնքան հեշտ, որովհետև կոլոր յոգը չէր թողնում).
Առաւ նոյնպէս մօր մատանին և նշանեց երկուսին։
Յետոյ ասաց. «Թող այս ոսկի մատանիներն այս անգամ
«Կրկին հիւսեն այնպիսի կապ, որ նմանուի առաջինին։
«Այս պատանին տոգորուել է՝ օրիորդի վառ սիրով.
«Իսկ աղջիկը խոստովանուեց, որ սիրում է փոխադարձ։

«Ուստի ես ձեզ նշանում եմ ծնողներիդ ցանկութեամբ
«Եւ դրացու վկայութեամբ. օրհնեալ լինիք յաւիտեան:

Դեղադործը դիմեց նոցա՝ ջերմ մաղթանքներ թափելով.
Բայց երբ ոսկէ մատանիքը ցանկանում էր քահանան
Օրիորդի մատը դնել, տեսաւ երկրորդ մատանին,
Որ Հերմանը աղբիւրի մօտ նկատել էր տխրութեամբ.
Ցետոյ ասաց մտերմական և կատակի խօսքերով.
«Ի՞նչ՝ այս երկրորդ անգամն է, որ նշանւում ես. բայց զգոյշ,
«Հին նշանածդ եկեղեցում չյայտնուի՛, չարդելէ:

Աղջիկն ասաց. «Թողէ՛ք, որ այս յիշատակին մի բոպէ
«Ես նուիրեմ. բարի մարդը արժանի է այդ բանին.
«Նա մեկնելիս այդ ինձ տուեց ու հայրենիք չդարձաւ:
«Նա դուշակեց, երբ տոգորուած ազատութեան վառ սիրով,
«Բարեփոխուած պայմաններում աշխատելու տենչանքով
«Պարիզ գընաց, ուր որ գրտաւ և՛ իւր բանտը և՛ մահը:
«Մընաս բարո՛վ, նա ինձ ասաց, գընում եմ ես. աշխարհում
«Այժմ ամեն բան տատանուելով երերւում է, բաժանւում:
«Գայքայւում են իշխանութեանց օրէնքները հիմնական,
«Հին գիրքերից կալուածները ձեռքից ձեռք են փոփոխւում.
«Բաժանւում է սէրը սիրուց, բարեկամը՝ ընկերից.
«Բաժանւում եմ այստեղ քեզնից, և ո՞վ գիտէ, թէ որտեղ
«Պէտք է գտնեմ կրկին ես քեզ. դուցէ վերջին խօսելս է:
«Ձիշտ են ասել, թէ աշխարհում պանդուխտ հիւր է ամեն մարդ,
«Եւ աւելի այժմ է օտար ամեն մէկը մեզանից.
«Գեղջուկն էլ մեզ չի պատկանում. ձեռքէ ձեռք են արդ անցնում,
«Ոսկի, արծաթ հալւում են հին, նուիրական ձևերից:
«Շարժման մէջ է արդ ամեն բան. երկիրն ուզում է փոխուել
«Բաւական մի վիճակի, որ նորոգուի նոր ձևով:
«Սէրդ պահիր դու ինձ համար. կրկին միմեանց թէ գտնենք
«Երկրի աւեր կոյտի վերայ, նոր էակներ կըլինինք՝
«Փոխուած, ազատ, ճակատագրին չենթարկուող.
«Ինչն է կապում արդեօք, նորան, որ այսպիսի օր տեսաւ:
«Բայց եթէ մենք փորձանքներից յաջողութեամբ չազատուենք,

«Կրկին միմեանց մենք հրճուանքով ուրախ-զուարթ չընդարկենք,
«Այն ժամանակ դու իմ պատկերն, օ՜, միշտ պահի՛ մտքիդ մէջ,
«Որ հաւատար արիութեամբ տանես թէ՛ վիշտ, թէ՛ հրճուանք:
«Եթէ մի նոր ընակարան, նոր միութիւն քեզ գրաւէ,
«Ցօժարութեամբ դու վայելի՛ր, ինչ որ բախտդ պատրաստէ.
«Սրտանց սիրի՛ր քեզ սիրողին, բարի մարդուց գո՛հ եղիր,
«Սակայն յետոյ զգուշացիր, որ չլինի՛ թէ կրկին
«Մի նոր կորուստ քեզ պատճառէ կրկնապատիկ ծանր վիշտ:
«Թող սուրբ լինի քեզ այդ օրը, սակայն ուրիշ բարիքից
«Կեանքը դու մի՛ գերադասիր. բարիքները ոչինչ են:
«Այսպէս ասաց, և այն օրից աղնիւ մարդուն չտեսայ.
«Բախտս կորաւ. հազի՛ր անգամ միտքս եմ բերել այդ խօսքերն
«Ու հէնց այժմ էլ յիշում եմ ես, երբ սէրն արդէն ինձ համար
«Պատրաստել է երջանկութիւն և վառ յոյս է ներշնչում:
«Ո՞հ, ների՛ր ինձ, ո՛վ սիրելիս, որ քո թևը բռնելով՝
«Դողում եմ ես. այսպէս ահա ցամաք ելնող նաւորդին
«Թւում է, թէ երերւում է երկրի երեսն հաստատուն:
Այս ասելով, մատանիներն անցկացրեց քովէքով:

Փեսան ասաց աղնիւ, զուարթ և առնական յուզմունքով.
«Դորոթէա՛, այս ընդհանուր վրդովման մէջ մեր կապերն
«Այսպէս ամո՛ւր թող որ լինին. միշտ աշխատենք միասին.
«Ձեռք ձեռքի տանք և մեր սիրուն կալուածները խնամենք:
«Երբ երերուն ժամանակում մարդս յոգդոգդ է հոգով,
«Օր ըստ օրէ նորա վերայ նոր չարիքներ կրթափուեն.
«Բայց ում խելքը իւր գլխին է, նա նոր աշխարհ կստեղծի:
«Ո՛չ վայել չէ գերմանացուն, որ այս վախկոտ յուզումը
«Շարունակէ և թուլութեամբ այս ու այն կողմ խոնարհուի:
«Միշտ «մերն է այս» պէտք է ասենք և մեր ասածն հաստատենք:
«Մինչև այսօր այն անվեհեր ազգերն են միշտ գովելի,
«Որ կռուեցին թշնամու դէմ՝ կանանց, որդոց, ծնողաց,
«Օրէնքների, Աստծու համար ու մահ գրտան միասին:
«Իմն ես արդ դու և այդ «իմը» աւելի է, քան երբէ՛ք.
«Անով գողով չե՛մ պահի քեզ, չե՛մ վայելի երկիւղով,

«Ա.յլ քաջութեամբ և զօրութեամբ։ Եթէ այժմ կամ յետոյ
«Զաբ թշնամին մեզ սպառնայ, ինձ քո ձեռքով զէնք կըտաս.
«Գետեմ, որ դու մեր տուն, հայր, մայր քո խնամքով կըպահես.
«Օ՜, համարձակ իմ կուրծքը ես մեր թշնամուն դէմ կանեմ։
«Թէ ամեն մարդ դատէր իմ պէս, ոյժը կելնէր ոյժի դէմ,
«Եւ ամենքս էլ խաղաղութեամբ կըհրճուէինք միասին։

1640.

«Ազգային գրադարան»
NL0171135

83
9-66